





ԱՊՏ-ԻՒԼ-ՅԱՄԻՏԻ

ՎԵՐՋԻՆ ԽԱՂԸ


A 13889



Կ. ՊՈԼԵՆՑ
ԳՐԱՐԱՆՔԻ Պ. ՊԱԼԵՆՑ

Զամասճրյաւ հոգույն, թիւ 20

1909



ՏՄԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

№ 12

ԱՊՏ-ԻՒԼ - ՀԱՄԻՏԻ ՎԵՐՋԻՆ ԽԱՂԸ

Ազատ Զատիկի մը վայելքները, ամբողջ երկու օրեր անասկ մը մեզկ զիճակի մէջ դրամ էին մաղ : Փամփուշտներու անխորհուրդ սպառումը, Զատիկի սուաջին երկու օրերուն, տարած էր մեր երխատարդներուն վրայէն, ինչ որ ամէնէն աւելի լրջութիւնը կը յատկանշէ :

Եւ ա՛նա երբորդ օրը ամբողջ մայրաքաղաքը արթնոտ աղատութեան, սահմանադրականութեան և տօնական օրերու երջանիկ երազէն, ապրելու համար ոտքատիկ կեանքը, որ ծնա Պոլսոյ զինուորներուն բմրոտ շարժումէն և որ խզճանարութեամբ զալարեց մանաւանդ հայ երխատարդները, որոնք տօնական խրախճանութիւններու մէջ սպառած էին իրենց փամփուշտները :

Զինուորներու այդ բմրոտ շարժումը, շարաշուք մէկ խաղն էր բռնակալութեան, ամբողջ ազոտ Թուրքիոյ երեւին նետուած, զգուշաւոր, ծածուկ փորձ մը, ՚ին բէժիմը վերականգնելու համար իր փլատակներէն, վայրկան մը ևս, և արդէն սողայելական յգացումը ի գլուխ պիտի ելլէր, ծնելով տարաախի, հալածանքի, խուճապի և արիւնի շրջան մը : Ամէն բան զխժամ է այսօր և մտքերը վերատացած են իրենց հանդարտութիւնը :

Ուրեմն կը ձեռնարկենք պատմութեան վճարել մեր պարտքը, և իրողութիւններով երեան բերել թէ ՚նչպէս Երլազը կեանք տուա զինուորներու այս բմրոտ և մրենոյն ատեն անգիտակից շարժումին որուն զեկը Երլարդն էր, որ սազգին նաւը փոթորիկի կոհակներուն մէջ

տանելով, ամէնէն վերջը դայն բանապետութեան անդունդը կ'ուզէր նետել նորէն :

Հեանեալը օրագրութեան ձևով , պատմութիւնն է այն վերջին խաղին գոր Ապտ-իւլ-Համիա դաւաճանօրէն խաղաց սզգին գլխուն : Իւրաքանչիւր օրուան պատմական իրողութիւնները պիտի ներկայացուին քննական խորհրդածութիւններով , երևան բերելու համար անոնց իսկական արժէքը , մինչդեռ ղէպքերու սկիզբին , հայ մամուլին մեծազոյն մասը սուանց ըմբռնելու զինուորական շարժումն ամէնէն վերջին նպատակը , տեսակ մը թժրածութեան մէջ պահեց իր ընթերցողները :

ՉԱՏԿԻ ԵՐԵՒՆԱԲԹԻ 31 ՄԱՐՏ 1909

Առաւօտու բնէ , մայրաքաղաքին կեդրոնին կապող հազարակցութեան զիծերուն վրայ , Շիրքէթի և Մահաւսէի նաւամատոյցներուն , չոզենուերուն և մայրաքաղաքին սիրտը կազմող կամուրջին վրայ խուճապը բնդհանուր է : Գործի մարդիկ՝ մինչև կամուրջ և կամ Պոլսոյ արուարձաններէն մինչև Գում-Գարու կամ Սիրքէճի գալէ վերջ , լեզապատաս նորէն իրենց տեղերը կը վերադառնան : Շիրքէթի կարգ մը նաւամատոյցներուն վրայ , կուղաց նոյն իսկ պահ մը , ուր կամուրջ գացող ազեւորներու ամտակ չի արուիր , ոտտիկանական կարգադրութեամբ :

Ղալաթիոյ կողմը , կամուրջին վրայ և Պոլսոյ կողմը սուանց զինուորական կարգի և սուանց սպայի զինուորներով ողողուած է : Այս զինուորները , երեքշարթի սատուան ստաջին ժամերուն կ'երթան , ստիճաւոր հրացանները ուսերնին և փամիշտանոցները փամիշտաներով լեցուն : Զինուորներու խուճանային խնում մըն է որ տակաւ կը ստուարանայ օրուան ընթացքին , իրեն գործողութեանց խարխախ ունենալով Այա-Սօֆիայի հրապարակը ,

Բ. Գուռը, Խորհրդարանը : Կամուրջը բանող և դէպի Այա
Սօֆիայի հրապարակը տարածուող գինուորական առաջին
խումբերէն եղած են Երլարդի Քիւրա և Աննաուա գին-
ուորները և հեծելազօրքերը : Երկուշարթի դիշեր իրենց բո-
լոր մեծերը գինաթափ ընելէ և բանտարկելէ վերջ, Երեք-
շարթի տառու կը խորտակեն գինուորական ամէն կար-
գապահութիւն և կանոն, և պարզած բմբոստութեան
դրօշակը, գուրս կ'ելլեն իրենց զօրանոցներէն, իրենցմէ
շատերը սուսնց կրկէք որոշապէս գիանալու թէ դէպ ի
ո՛ւր և ինչո՛ւ : Տաննապետներ, Չալաւններ կը վարեն գի-
րենք : Ասիկա արդէն կ'ըլլայ հրդեհի նշանը, ուրկէ օր-
ուան ընթացքին հետզհետէ կը բանկին Պօլսոյ գինուորա-
կան գրեթէ բոլոր վաշտերը, ծովային և ցամաքային,
հեծեալ և հետեւակ, մէջը ըլլալով նաև որսորդ զօրքե-
րու ջոկատներ :

Ուրեմն շարժումը Երլարդէն կը սկսի և մասնակի
կերպով . մայրաքաղաքին գինուորական կարգապահ իշ-
խանութիւնը անդամալուծուած վիճակ մը կը ներկայա-
ցնէ, հակառակ մեծերուն կամքին, որուն դէմ հասա-
րակ գինուորներուն բմբոստութիւնը ծայր կուտայ, և Ե-
րեկոյին կարգապահ գինուորական իշխանութիւն գոյու-
թիւն չունի այլ ևս :

ժողովուրդին անհասանելուն դէմ որ և է շար արարք
չիկայ բնաւ . ընդհակառակը ծպտուած գինուորներ սիրա
կուտան ժողովուրդին և կ'ըսեն թէ իրենց դէմ ոչինչ
կայ . բայց տեսարանը սպառնական է և ժողովուրդը բը-
նազդով կը գանէ թէ շարիք մը կայ գինուորական սյդ բմ-
բոստ շարժումին մէջ և եղածը վարպետութիւն մըն է լոկ :

Մտքերը ընդհանուր անհանգստութեան մէջ են :
Շոտեր կը զգան թէ երկրին ճակատագիրը մեծ ճգնա-
ժամէ մը կ'անցնի, թէև անդին կայ ժողովուրդին ոչ-բա-

Նիմաց դասակարգը, որ համակրութեան գօտիով մը կը պարտքէ զինուորական խումբերը, անշուշտ խորհելով թէ այդ զինուորը որ իրեն քաղաքական ազատութիւն տուաւ Նիմակ չէր կրնար դաւաճանել այդ ազատութեան դէմ. բայց իրականութիւնը որքա՞ն հեռու է սակից և եղածը ազատականութեան ոսկեզօծումին տակ, իշխանութիւնը նորէն երկարդի մէջ կեդրոնացնելու փորձ մըն է :

Ահա՛ թէ ինչպէս զինուորական այդ շարժումին կենթադրեալ վարիչ Չափուշները կը բանաձևեն իրենց պահանջումները, Սորճրգարանի դրան առջև, սուխնները հրացաններուն անցուցած :

Ա. Պէտք է որ նոր օրէնքներ խմբագրուին Շէրիի Նիման վրայ :

Բ. Հիւսէյին Հիւմի բաշա և պատերազմական ու ծովային նախարարները պաշտօնանկ ըլլան :

Գ. Ահմէտ Բիզա պէյ պաշտօնանկ ըլլայ և անոր յաջորդէ Պէրութի երեսփոխան և ազատական կուսակցութեան դեր-նախագահ Բամայիլ Բէմալ պէյ :

Դ. Մայրաքաղաքէն հեռացուի Թանիկի խմբագրապետ և երեսփոխան Հիւսէյին Ճահիտ :

Ե. Գրիգոր էֆ. Չճրապ և ազատական կուսակցութեան ազգեցիկ անդամներէն մէկը դեր-նախագահ կարգուին երեսփոխանական ժողովին :

Զ. Որսորդ զօրաց սպանները փոխուին :

Սահմանադրութիւնը զինուորները պարզեւած էին ժողովուրդին, և իրերու բնական ընթացքով՝ նոյն զինուորները կեղծ էին Նիմա իբր թէ նոր բարեօքումներ մտցնել այդ սահմանադրութեան մէջ, զէնքի ու ժով : Ի՞նչ տխուր դաւեշտ : Բանապետութեան դէմ զինուորութեան բռնի ոյժը հրաշք գործեց և ժողովուրդին ընկիւրը զինուորը

բրաւ և ամբողջ աշխարհի պատմութեան մէջ նմանը չի տեսնուած եզանակով մը, առանց արխանաճեղութեան, մէկ գիշերէն միւս առտուն, բռնակալ Թուրքիան ազատ Թուրքիա եղաւ : Բայց այս անգամ ի՞նչ պէտք կար գինուորական բռնի ոյճի և ի՞նչ կը հասկնային հասարակ գինուորները Գահլիճին քաղաքականութենէն և Խորհրդարանին ուղղութենէն :

Վերի բանաձեւին վեց պահանջումները վերջնական էին : Առաջինը Շէրիադի հիման վրայ, նոր օրէնքներու խմբագրութեան պարագան էր : Ի՞նչ ըսել կ'ուզէր ասով : Գործադրութեան մէջ եղած ս'ր օրէնքները Շէրիադին դէմ վտանգներ էին. արդեօք այդ պահանջումին տակ զազանի նպատակ մը կար, ամէն օրէնագրական իրաւունք, իբր խալիֆա, սուլթանին անձին վրայ կեդրոնացնելու :

Գալով միւս հինգ պահանջումներուն, ամէնուն ալ նպատակն էր ջախջախել յեղափոխական և քաղաքական ամէնէն զօրաւոր կուսակցութիւնը, Իթթիհատեանները, և Ահրարները օրուան ամէնէն զօրաւոր քաղաքական կուսակցութիւնը դարձնել : Բայց ե՞րբէն ի վեր և ի՞նչ հրաշքով Պոլսոյ գինուորները Ահրարեան դարձած էին և ի՞նչու համար : Կար երբէք հաւանականութիւն մը, որ Ահրարեանները կազմակերպած ըլլային այդ սահմանագրական սուլթանոսր ցոյցը :

Այս կերպով ուրեմն Երլարդի երկացրի քաղաքականութիւնը մերկապարսնոց երեսն կուգար. «բաժանեա՛, զի աիրեցես» ի մաքիալէլական քաղաքականութիւնն էր օրուան խաղացուած խաղը :

Մանաւանդ Հասան Յէճմի յպանութենէն վերջ, որ անշուշտ առնչութիւն ունի վերջէն սարքուած գինուորական ցոյցին հետ, կ'ուզէին մէկ կողմէ զօրացնել Ահրար-

բականները և միւս կողմէ պետական հարուածի մը արագութեամբ և Անրարական դիմակի ներքե քար ու քանդընել Իթթիհատական կուսակցութիւնը :

Սակայն երեքշաբթի օրուան համար դիմակները վարչէին առնուած տակաւին , և ընդհանուր անտարձակութեան և խարխափումի մէջ օրը տարածամեցաւ :

Իրիկուան սասուերները երբէք այնքան չարաչարօրէն չէին իջած մայրաքաղաքին վրայ որքան այս իրիկուն : Քիչերը յղի էր դէպքերով , և մանաւանդ արուարձաններու համապարփակ մութին մէջ , Քրիստոնեաներու աչքին , եղևնի սգիները տակաւ կ'ուրուագծէին կարծես : Զինուորներ իրենց զօրանոցներէն հրացաններն առած դէպ ի ցոյցին վայրը կը փութային իրիկունը ուշատեն , և տեղ տեղ մայրաքաղաքին բնակչութեան մէջ անատուգութիւնը սարսափի կը փոխուէր , քանի որ խուժանային ծայրայեղութիւններու ատեն , դիրենք պաշտպանողներ չպիտի ըլլային :

Եւ ա՛նա՛ , դիչերին մէջ ժամը երեքուկէսին , Պոլսոյ կողմը խոնուած զինուորական ամբօխին կողմէ սկստահարկու հրացանաձգութիւն մը , որ ամբողջ երեք ժամ տեւեց : Եղբայրասպան ճակատամարտ մըն էր արդեօք եղածը , Իթթիհատական և Անրարական կուսակցութիւններուն բաժնուած զինուորներուն միջև , արդեօք հայրենիքի քանի՛ զաւակներ կ'իջնային հայրենիքի այդ գնտակներէն , որոնց պայթումի որոտումը , նոյն պահուն հարուէն փչող քամիէն տարուելով , մայրաքաղաքին բոլոր ծայրերը կը տարածուէր և մութին ու սարսափին մէջ գերազրգումած երեւակայութիւնները , ա՛լ ամէնէն արխնտտ եղ'րականութիւնները կը կարծէին տեսնել հեռուէն հեռու , որոնց խօսուն լեզուներն էին այդ հրացանաձգութիւնները , հեռուն մութին մէջ դալարուող փայլատակումով մը :

Մայրաքաղաքին կարգ մը քրիստոնեայ արուարձաններուն համար այն գիշերը կեանքի ու մահուան անատոզութեան մէջ տարութերող գիշեր մը եղաւ, որուն նրմանը թուրքիոյ քրիստոնեայ ժողովուրդը, մանաւանդ հայ տղապանակութիւնը շատ անդամներ անցուցած է և որ իրեն համար, մահուանէ աւելի դառն է շուրջը թէ սպառնալու պէս վերջինը չպիտի ըլլայ:

Ինչ որ ամէնէն աւելի ցաւով տեսուեցաւ երեքշաբթիի ճգնադիշերին մէջ, հայ յեղափոխական կուսակցութիւններուն պէտք եղածին շտի գինուած չըլլալն էր, ամէն պատահականութեան հանդէպ, ժողովուրդին ինքնապաշտպանութեան գործին նուիրուելու համար: Քըննադատութիւն մը չէ այս զոր կ'ընեմ, քանի որ պատճառներուն չեմ մաներ, այլ իրողութիւնն է միայն որ կը մատնանշեմ ու կ'անցնիմ:

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, 1 ԱՊՐԻԼ 1909

Երէկ գիշերուան պատահածը կարծես Ապրիլ մէկի խաղ մըն էր. որովհետեւ երբ շորեքշաբթի առտու մայրաքաղաքը արթնցաւ, տեղեկացաւ թէ գիշերուան առւելի հրացանաձգութիւնը զինուորներուն ուրախութեան ցոյցերն էին: Իրենց մեծերը կաշկանդելու, իրենց կարգապահութիւնը թանակոխ ընելու զինուորական եղևոնը կայսեր կողմէ ներուած էր, իսկ իրենց սպաննջումները ընդունուած էին: Իբր թէ կրնային չընդունուիլ ալ, քանի որ իրենց ընթացքին հակառակ կարծիք յայտնող ամէնէն յարգելի և բարձրատիճան զինուորականներ, վայրկենական կերպով դնտակահար եղան: Եւ յետոյ ուր տեսնուած է որ զինուորներ, թանակը քայքայելու տատիճան զինուորական կարգապահութիւնը թանակոխ ընե-

լէ վերջ, մայրաքաղաքի փողոցներուն մէջ, տուներու ապակիները կտարելու և քիււերը ծակծակելու աստիճան հրացանաձգութիւն ընեն իրենց ուրախութենէն պարզապէս, և այս կերպով իրենց փամփուշաները վասնեն: Եւ սակայն այս բոլորը իրողութիւններ են և ժողովուրդը ստրաստիաճար և հակասութիւններու առջեւ ապշած, դեռ չի կրնար որոշ մեկնութիւն մը տալ եղածին:

Փորձը շատ աղէկ յաջողած է: Երեսփոխանական Ժողովը անդամատուած վիճակ մը ունի, քանի որ սպաննուածներ, հրաժարածներ, փախածներ և վախերնուն իրենց թաքստոցներէն դուրս չկողոզ երեսփոխաններ կան: Դահլիճը հրաժարած է, և հին ուէժիմը բաղմամայ արտաքին գործոց նախարարը, ոչ մէկ կուսակցութեան պատկանելու սուաքինութեամբը վարչապետական ամենափափուկ պաշտօնին կը կոչուի, Շէրխազին աւելի ուշադրութիւն դարձնելու յանձնարարութեամբ: Ասով լուելիայն կ'ուզուի ցոյց տալ թէ պատահածը Իթիխատականներու և Ահրարականներու միջեւ բաղխումի մը հետեւանքն է:

Երէկ, գործողութեանց կրկէսին վրայ ըմբոստ զինուորներ միայն կային. զինուորական շարժում մըն էր միայն երէկուանը, դրդողները տակաւին մէջակող չէին երևար: Այսօր յայտնի զինակցութիւն մը կ'երևայ սօֆիթաներու և ըմբոստ զինուորներու միջեւ: Ինչու համար է այս զինակցութիւնը. ինչ է իրենց նպատակը: Սօֆիթաները, մեծ մասով հին ուէժիմը ծագած խաֆիէներ, բռնակալութիւնը վերահաստատելու գործին մէջ զինուորներուն կրակը միշտ վառ պահող և զանանք քշողներն են: Ուստի կը տեսնուի թէ զինուորներէն վերջը գործող երկրորդ ձեռքերն են սօֆիթաները, որոնք իրենց կարգին գործիչներն են Իթիխատը Մուհամմէտայէ կոչուած շատ կասկածելի ընկերակցութեան մը: Ամբոխին կրօնական

դգացումները շարաշար գործածելով կրօնքը քաղաքական ազատագրութեան առջև իբր թուամբ մը հանկը նոր չէ աշխարհիս պատմութեան մէջ : Ուրեմն այդ հին խաղն է որ կը խաղացուի : Միզան թերթը, սահմանադրութեան առջի օրերէն այս ուղղութեամբ իր ծառայութիւնները արամադրելի հռչակեց Ուղղոյին . կ'երեւայ թէ հոյր բաւական մշակուեցաւ մէկ քանի սահմաներու մէջ, քանի որ վերջերս Վօլխան թերթն ալ սկսաւ հրատարակուիլ, Միզանէն անհամեմատ աւելի ետանդ դնելով՝ այդ ուղղութեամբ գործը յառաջ տանելու համար :

Ու վերջապէս հասաւ այս օրը, ուր Իթթիհատը Մուհամմէտիյէի անդամ սօֆիթաները և գրպաննին դրամով և գօտինին գնտակով լեզուն գինուորները, Պոլսոյ խողոցներուն մէջ սկսան գործել, իրենց անպաշտօն օժանդակներ առնելով նաև ամբօս կոչուած շատ կտակածելի բազմութենէն : Եւ սկսաւ թայանի ու քանդումը գործը Իթթիհատակաձմերու գէմ ուղղուած : Ու այս անգամ սօֆիթաներ ու ամբօսը, միշտ էրիտոյ բաւը բերաննին, խորտակեցին Սամանեան Քամիդէին ճէրէֆ փողոցի պաշտօնատեղին, նոյն կուսակցութեան պաշտօնաթերթ Շուրայի Իւմմէթի և նորէն նոյն կուսակցութեան ազգեցիկ անդամներէն Հիւսէյին Ճահիտի օսկանին՝ Թանլինի ազատաններն ու խմբագրատունները : Այս արհաւիրքը բաւական եղաւ որպէս զի մայրաքաղաքին ամենկեղուեան ազատ Մամուլը մէկ անգամէն լեզուն փոխէ և մեծ վերապահութիւն ցոյց տայ :

Բաց այս բոլոր եղեւները և իրաւանց բնաորութիւնները կ'ըլլային սահմանադրական երկրի մը մէջ, ճէրիտոյ և արդար սահմանադրութիւն պահանջող մարդոց ձեռքով : Անո՛ւշ երկիր, որուն մայրաքաղաքին Ոստիկանութեան Դբան ճիշտ գէմը գանուած չէնք մը, Բլխալը

Ստանձեան Քոմիդէի անդամ Թուրք կիներու, կրնայ խու-
ժանք կործանել, և որևէ ընդդիմութիւն ուստիկանութեան
կողմէ ընառ տեղի չունենար: Աւ մննք տակաւին այս
տարրերով կազմուած ուստիկանութենէ մը, որ հին ունիւթ
կը հոսի, խեր կը սպասենք. վայ մեզի:

Ազատ-խլ-Համիտ ա՛լ կոչութեան ուէրն է: Այսօր
ո՛չ Բ. Դուռ կայ, ո՛չ Խորհրդարան: Հրամանք վերէն
կը բղխի: Խաթիբը Հիւճայուն մը Թէվֆիդ փաշան վէզիր
կ'ընէ: Հեռագրու Բումէլիի բոլոր կազմերէն ախպոզա-
բար ուղուած տեղեկութիւններուն կը պատասխանուի թէ
դէպքը կարեւորութիւն չունի, և կայսրը կը հրամայի՛
վերստին ելլալով դարձնել նախորդ պատերազմական
նախարարին հրամանով այն տեղէն հեռացուած զօրքը:
Ար ունի տկանջս բախոյ, լուխոյ: Ե՛վ սահմանադրական(!)
Թագաւոր, որո՛ւն կը պատկանի քու սնննական պաշա-
պանութեանդ խնդիրը, ի՛նչ է պատերազմական նախա-
բարին գործը: Եւ մանաւանդ ինչո՛ւ հակահրաման մը
տալ սահմանադրական նախարարի մը կարգադրութեան
դէմ: Նորէն կայսերական իրատէ (?) մը կը վերցնէ, առջի
օրը եւրոպա զրկուելիք հեռագիրներու վրայ դրուած
արդելքը և դրաքննութիւն կը սահմանէ (?) անոնց համար:
Ի՛նչ տեսակ սահմանադրութիւն է տակաւ, ո՛վ թագաւոր:

Այս օրուան կը հանդիպի նաև Ատանայի ջարդին
սկզբնաւորութեան աճաւոր գոյժը: Իսկ ինչ որ ամէնէն
սարսուռղեցիկն է ասոր մէջ, ներքին գործոց նախարա-
րութեան զրկած այն հեռագիրն է որով կը յանձնարարուի
չի յարձակիլ, պանքաներուն, ելեւ մտական հաստատու-
թիւններուն և օտարներուն վրայ: Չէ՛, այս տեսակ Սահ-
մանադրութիւն չի կրնար լլալ: Ըսել է, բնիկները ջար-
դելը մեծ հոգ մը չի պատճառեր կեդրոնին: Նորէն Հա-
միտական բռնակալութիւնն է որ զլուխ կը վերցնէ:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 2 ԱՊՐԻԼ 1909

Երկու օրուան մոլեգին հրացանաձուլիւնը և զինուորական թէրորը մէկ կողմէն ու Իթթիհասանաներուն պատուհասումը, փոխուստը և իրենց բոլոր պաշտօնատեղիներուն քանդումը միւս կողմէ, բաւական եղած են, որպէսզի մայրաքաղաքի բնակչութիւնը ինքն իր մէջ ամփոփուի, սարսափէն կծկաի, ուստի ա՛լ աւելորդ կը նկատուի հրացանաձուլիւնը և քաղաքը, ըստ երեսոյթի իր անդորրութիւնը վերասացած է, գործի մարդիկ մեծ մասով իրենց գործերուն գլուխը կը փութան: Մշտքերը սակայն լարուած են և սրտերը դողի մէջ: Անդորրութիւնը շատ խաբուսիկ է և գիտակցութիւնը հեռո՛հեռէ արթննալու վրայ թէ բնակալութեան իժը նորէն գլուխ կ'երերցնէ:

Այսօրուան ամէնէն յատկանշական բաներն են, Պոլսոյ և Ղազարիոյ ամէն փողոցները ողողող չփացած զինուորներուն թերօրական վարմունքը ժողովուրդէն անհատներու հետ, խաֆիցէներու՝ տեղ տեղ նորէն երեւան գալը, թերթերու մէջ թաղասօրին անուան աւելի ակնածանքով և աւելի մակդիրներով գործածուիլը և որ ի կարգին:

Այս օրուան կը հանգիային բնապետական մէկ քանի շարժումներ որոնք շատ բան կը մատնեն. նախ, Սուլթան Ահմէտ խուժած զօրքերուն պահանջումները բնդունած և բնդհանուր ներում շնորհած բլլայուն, Սուլթան Համիտ զանոնք երախտապարտ կը դարձնէ իրեն, (պարագայ մը որ թերթերու մէջ կը գրուի) և ասոր վերայ Պոլսոյ զանազան թաղերուն մէջ շատ մը զինուորներու՝ ուրախութեան իբր նշան արձակած գնտակներէն բազմաթիւ անմեղ քաղաքացիներ կը սպաննուին կամ կը

վիրաւորութիւն , որպէս զի եթէ պետական այս առաջին
հարուածին երկրորդ աւելի զօրաւոր հարուած մը յաջոր-
դէ , ժողովուրդը վախէն սմբած , տեղէն երերալու սիրա
չանենայ : Երկրորդ , բազմաթիւ ստոխանական քամբակը-
նեք , Սուլթան Մհմէտի հանրային պարակէզին մէջ հաւաք-
ուելով , կ'որոշեն պահանջել ստոխանական նախարար
Սամի փաշայէն , որպէս զի հրածարի : Ո՞վ զիրենք հա-
կը հաւաքէ , և ինչո՞ւ իրենց մեծին հրածարութիւն կը պա-
հանջեն : Արդեօք անո՞ր համար սր նախարարը Օսմ . Գո-
մբդէին անդամ է : Ե այց ի՞նչ առնչութիւն ունի այդ
քանը քամբակներուն հետ . խորհուրդ : Սուլթան Համիտ
հայրենասիրաբար (. .) կը յայտարարէ մէկ քանի երես-
փոխաններու թէ չուզեր որ երկիրը Պարսկաստանի բախ-
տակից լլայ . բայց ինչո՞ւ Պարսկաստանի հետ բազդա-
տել , քանի որ ինքզինքը միւս կողմէ սահմանադրութեան
հաստատրիմ կը հուշակէ : Արդեօք ստիկա սպանալիք մը
չէ , սարսափ ցանկու համար : Չորրորդ , Սուլթանին սե-
նեկապետ Ռիֆաթ պէյ Բ . Գուս երթալով , Եպարքային
և Շէյխ-իւլ-Իսլամին կը հողորդէ թաղաւորին հրաման-
ները : Բայց ի՞նչ հակասութիւն է ստիկա , թաղաւորին
կամ սահմանադրականն է կամ ոչ . եթէ սահմանադրա-
կանն է , պատասխանատու չէ երկրին վարչութեան հա-
մար , և պատասխանատու չլլալով վարչութեան գլուխը
գանուող պատասխանատուներու հրամաններ չի կրնար
տալ . կամ եթէ սահմանադրականն չէ , ինչո՞ւ կը խարէ
մեզ , ինքզինքը ամէնէն թու՞նդ սահմանադրականը ցոյց
տալով և ցաւ (. .) կը յայտնէ որ սակից 33 տարի ա-
ռաջ խափանած էր Խորհրդարանը : Ասալը Թէվթիգի Իթ-
թիհատական հրամանատարը , զինուորի համադրեալ կրող
խորհրդաւոր մարդոց կողմէ , կամ թերեւս վարձկան խ-
կական զինուորներու կողմէ Երլարդ կը տարուի և թա-

գաւորին ցոյց կը արուի . յետոյ թագաւորին ձեռքի մէկ շարժումին վրայ պալտաւէն քիչ մը անդին տարուելով Նրէշարար կը խողխողուի և յօրինակ այլոց մարմինը ծառէ մը կը կախուի : Աւելին կայ , Մեծ Կղզիի ջոջ բանտարկեալները , կ'երեւայ թէ ներքին գոնուակութիւն մը զգալով եղածներէն , Կղզիին մէջ անտուր հաստործուկութեամբ մը կը սլափն և նստանաւորը , ամէնուն ի տես կուզանս կը նստին : Կ'երեւայ թէ հեռագրական տեղեկութիւններ արուած են իրենց : Վերջապէս «Փատիշա՛րմ չօք եաչանն , երկու երեք օրէ ի վեր , փողոցներու մէջ , խուժան կնիքսդ արած բազմութիւններու և զինուորներու բերանը ամէնէն յամառ յանկերզն է : Սուլթանն Համբարին ոչ-նպաստաւոր հետաէն հետու ակնարկութիւն մը անգամ բաւական է , որ մարդ վայրկեանապէս փողոցին մէջ զնտակահար բլլայ : Փողովուրդ , Գահլիճ , Խորճրդարան և Մամուլ մեծ խոհամութիւն ցոյց կուտան և իրենց բանամտագրական ազատութենէն շատ բան սիրով կը զեղչեն , հարկաւ չնորճիս ? Ետրին Վեհափառութեան :

Օրուան շրջած լուրերը երբէք սպանալիչ չեն , և յաջորդ օրուան համար վատթարագոյն գուշակութիւններով , քաղաքացիներ իրենց սուները կը վերադառնան :

Մամաւորարար Հայերը ա՛լ բմբունած են , թէ Համբարան հայահալած դիւային քաղաքականութիւնը կը սկսի կեանքի նշաններ ցոյց տալ : Չաքմաքճբլարի հայ գրատուններու ցուցափեղկերուն մէջէն , սպանալիքով վերցնել կը արուին հայ Ֆէտայիներուն , այսինքն սանձազրական ազատութեան ներտներու պատկերները . սպանալիքով վերցնել առողները , զինուորներ են : Ուրեմն Համբարական բռնակալութիւնը , զինուորական սուլնաւոր բռնակալութեան մը փոխուած է :

ՈՒՐԲԱԹ, 3 ԱՊՐԻԼ 1909

Օրը շատ ձախորդ տպաւորութիւններու տակ կը սկսի: Ընդհանուր անատագութիւն մը ամէն կողմ կը ափրէ, խանութներու և գործատեղիներու մօտ մասը դոյց է:

Առտուն կանուխէն դէպ ի Պէշիկթաշ կը դիմեն Սօֆիաներ, Քիւրտեր, դատարկապորաններ, աճազին բազմութեամբ և Սէլամըքք տեղի կ'ունենայ խուժանային հանդիսատեսներու ն ըկայութեան: Այս խուժանը կը սպասէր որ թագաւորը իր խալիֆա կանաչ վերաբերով և կանաչ փաթիթոցով երեւար: Հարկաւ իրենց սպասած կերպովը չէ որ Սուլթանը բազմութեան երեցաւ: Բայց խուժանը յուսովբէպ ըլլալուն համար դժգոճութեան նշաններ ցոյց չի տուաւ: Ընդհակառակը, «Փատիշահըմ չօդ եաշա» պտալով և խնդումներս վերադարձաւ: Բայց ինչպէս բացատրել ասոնց յուսովբէպ ըլլալը և խնդումներս վերադարձը: Յետոյ, ս'վ սղրալի Շէրիազ, որ սղէա Քիւրտեր և դատարկապորաններ ունին քեղի պաշտպան կամ թէ աւելի ճիշտը, քու անունովը ինչ սճիրներ կը գործեն այդ մարդիկը:


Բայց ամէնէն յատկանշականը այս ամէնուն մէջ, սիրտէ սիրտ եղած համերաշխութեան այն սղին է, որով մութի այդ դաւակները, ներքին մղումէ մը տարուելով ուզեր են երթալ և Համրա չխալիֆային Սէլամըքքի հանդէսը տեսնել, որովհետեւ Շէրիազի պաշտպան է եղեր անխկարայց երբ և ինչպէս ամբողջ Օսմանցի ժողովուրդին սիրտը եղող Պորհրդարանը ինքզինքը հակառակորդ հրահակած էր Շէրիազի, որ աւելինսրով ուղուեցաւ խողխողել սղզին ներկայացուցչութիւնը: Աւելին կայ, սօֆիաներուն, քիւրտերուն և դատարկապորաններուն տակաւին կարգը չեկած, անդին չկան բնաւ պարկեշտ խղամներ,

որոնք նոյնքան նախանձախնդիր եղած ըլլան Իսլամական կրօնքին և օրէնադրութեան արամադրութիւններուն : Անոնք ս. ւ. ր են ուրեմն : Ամէն անհակէտով բացորոշ է թէ Ապտ-իւլ-Համփա, սարափ ազդող խուժանին և կաշառուած զինուորականութեան ձեռքով նոր բռնապետութիւն կ'ուզէր հաստատել, որ աստուածպետական բռնապետութիւնն է :

Պոլսոյ ամէն կողմերը պատող զինուորներ, որոնք առուտար ալ կ'ընեն, կը անանուի թէ զբազանին առատ դրամ ունին : Այս կէտը մասնաւոր կերպով կը ծանրացնէ վիճակը, որովհետեւ անոնք որոնք իրողութիւններէն քիչ շատ հեռութիւններ հանելու կարողութիւնը ունին կը զգան թէ ասոնք զբող մը կայ, կաշառող մը, և ստիկա Ապտ-իւլ-Համփաէն ուրիշ մէկը չի կրնար ըլլալ, քանի որ ասոնց բոլոր արարքները նպատակ ունին զինքը աստուածպետութեան կուռքը զարծնել և Սահմանադրութիւնն ա'լ յանձին Իթիբհատականներու Զախճախել : Հանելուկը ալ լուծուած է . Սուլթան Համփա կ'ուզէր իր պատասխանատուութեամբ և իր ձեռքին մէջ կառավարութիւն մը վերահաստատել, մեռեալ տառ եղած խորհրդարանով մը, ինչպէս որ իր 33 տարուան յաւատանիծուած բռնապետութեան միջոցին, երկրին մէջ ամէն զեղեցիկ սկզբունքներ մեռեալ տառ միայն մնացած էին :

Քաղաքական բոլոր կուսակցութիւնները շատ լաւ բնութեամբ են իրաց կացութիւնը և Հ. Յ. Գաշնակցութեան նախաձեռնութեամբ միակ գաղտնիարի մը շուրջ կը միանան առանց ցեղի և կրօնքի խտրութեան և կ'որոշեն պատրաստ զանուիլ ամէն պատահականութեան հանդէպ, և մահուան գինով մաքսոյ Սահմանադրութեան հակառակ եղած ոսնձգութիւններու դէմ : Ասիկա, օրուան յուեզոյն սպաւորութիւններուն մէջ ամէնէն մտիթարու-

H 13889



կանն է, և մեծ անձկութեամբ բայց վազուան համար լաւագոյն յոյսերով գիշերին մէջ կը թազուի մայրաքաղաքին բնակչութիւնը:

ՇԱՐԱԹ, 4 ԱՊՐԻԼ 1909

Առջի գիշերուան անստուգութեամբ այսօր մայրաքաղաքը արթնցաւ: Ամէն մարդ որտարեկ իր գործին կերթայ. Ղալաթիոյ կամուրջը, մայրաքաղաքին հողեկան կացութեան այդ ցոլացուցիչը, ընկճող սպաւորութիւն մը կ'ընէ: Հո՛ն ուր ազատութեան ամենէն դու շեշտերը որտացած էին տակաւին քիչ ամիսներ սուսջ, հիմա զլլխաւորապէս քաղաքացիներու ճնշող սողանցումը կը տեսնուի: Բան մը կայ միմտորտին մէջ որ հեղձուցիչ է: Պարկեշտ քաղաքացիներ, թէև քիչ մըն ալ միամիտ, յուսախաբ եղած են նորէն, կը ուզասուէր որ երէկի Սէլամըքը կամ տեղի չունենար և կամ վերջինը բլլար. բայց ամէն բան սովորական կերպով ընթացած է, և Ապտ-իւլ-Համիտ դացած է համանուն մզկիթը ու հիւրանոցին մէջ նորէն դեպանատուններու ներկայացուցիչներ զբանուած են:

Քաղաքական ամենազգի կուսակցութիւններու և այլ իրազեկ շրջանակներու մէջ արդէն հաստատութիւն դատած է սա համոզումը թէ Սահմանադրութիւնը շատ մեծ վտանդի մը մէջ կը գտնուի, Ռէաքսիոնը իժի գլուխ վերցուցած է, Ատանայի ամբողջ նահանգին մէջ ջարդի կազմակերպութիւնը հետզհետէ կը ծաւալի, Էրզրում խռոված է բռնապետութեան կեանքի նշաններ ցոյց տալուն հանդէպ և երկիրը իրական ճգնաժամ մը կ'անցընէ, և ահա՛ կէս օրէ վերջ, ժողովուրդին անտեղեակ մասին մէջ զրոյց կը շրջի թէ Սեւանիկէն զինուոր ժամանած է երկաթուղիով

Պոլսէն 3 ժամ հետո Չաթալճա, արդէն սրտադուլի մէջ
ամէն մարդ խանութը բացած, կը սարսափի այս զրոյցէն,
խանութները կը գոցուին նորէն, վախցուելով Պոլսոյ և
Անլանիկէն եկող զինուորներու միջև բուռն ընդհարումէ
մը, և չէ՛ մը որ մէջտէղը գանուողը մէջ կը խաղայ: Գործի
մարդոց սարսափը կը փոխադրուի իրենց հետ Պոլսոյ բոլոր
արուարձանները և գիշերը կ'անցնի արձախրքով լեցուն
երկունքի մէջ:

ԿԻՐԱԿԻ, 5 ԱՊՐԻԼ 1909

Զատիկի նոր կիրակին, դժբախտաբար նոր յայտեր չի
բերեր տակաւին: Երկու գաղափարներ մտքերու շրջանը
կ'ընեն, սուաջին թէ Շէրիադը հաշտ է Սահմանադրու-
թեան հետ և երկրորդ թէ Սուլթանը չի կրնար զայն
պարզեկել կամ ետ խլել: Յաւայի է ըսել թէ մտքերը
ուղիղ համբու մը մէջ չեն գանուիր, և իրերու մասին
եզոք գատուութիւններն ալ հետո են ճշմարտութեան
համապատասխանելէ: Կը յիշեմ երէկուան այցելութիւնս
Ամենապատիւ Իզմիրլեան Հայրիկին որ ծանօթ թատան-
ցողութեամբ կը տեսնէր արդէն թէ եզոք սպայազուրկ
զինուորական ցոյցը բանապետութիւնը վերահաստատող
փորձ մըն էր միայն և թէ Շէրիադը չէր կրնար հիմ
կազմել Սահմանադրութեան, քանի որ այնքան լուսկեր-
պով կարելի էր ըստ Շէրիադի արդարացնել Սահմանա-
դրութիւնը որքան բոլորովին դատապարտել, չէ՛ մը որ,
«Աննաարշա կէօրէ ֆէթվա վէրիբլէր»: Ն. Ա. Օծութիւնը
ըստ թէ Շէրիադով կրնանք այս քաղաքը կործանելու
ֆէթվա մը հանել և ուրիշ մըն ալ նոյն քաղաքը չինե-
լու ֆէթվա մը կը հանէ:

Գալով այն երկրորդ կէտին թէ Սահմանադրութիւնը

ժողովուրդին իրաւունքն է և ժողովուրդին չենք կրնար
զայն պարզեւել կամ անկէ ետ խելել, եթէ ասիկա բռնա-
կալութեան փորձին դէմ դնելու կոչը բլար, շատ ճիշդ
պիտի բլար, բայց այս խօսքը կ'ըսուի, մինչև այսօր պա-
տահաները աչքի առջև ունենալով, ինչ որ ցոյց կուտայ
թէ իրականութիւնը բնաւ չէ բնութեամբ ժողովուրդին
կողմէ և թէ ժողովուրդին այս սխալ գաղափարին կազ-
մուելուն մէջ մամուլին մէկ մասը ցաւալի է բնկ թէ իր
բաժինը ունեցած է: Սպայազուրկ զինուորական մտա-
պարտ շարժումը ցայսօր սքանչելի կերպով յաջողած է և
Սուլթան ամիրտ կայութեան տէրն է ու Երլարդէն հրա-
մաններ կ'որոտայ նորէն:

Հեռուէն հեռու պղտիկ լոյս մը սկսած է բնդնըշ-
մարուիլ սակայն և ժողովուրդը գիտէ թէ Ազատութեան
պարզելիչ ու պաշտպան Սելանիկեան բանակը Չաթալճա
է արդէն: Մեծ յոյս ունի անոր վրայ բայց միւս կողմէ
ալ տակաւին Պոլսոյ անտպայ զինուորներուն սարսափին
տակ կը գտնուի:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 6 ԱՊՐԻԼ 1909

Փէշ անցուած կիրակիէ մը վերջ, նոր շարաքը
ուելի յուսալից կը սկիի: Խորհրդարանը որ պահ մը կրա-
ւորական մարմին մը դարձած էր մեղադրելի զինուորա-
կան շարժումը մը ճնշումին տակ, ինքնավար ընթացքի մը
նշանները ցոյց կուտայ, որովհետև Ազատութեան Բա-
նակը արդէն Պոլսոյ պարիսպներուն շատ մօտեցած է
և Իթթիհատեանները Հատէմ քէօյ կը կեդրոնանան հետ-
զհետէ, իրենց գլուխը ունենալով Նիսաղի Պէշ: Խորհրդա-
րանին գիրքը ամբասանուած է և կծիկը քաղուած է այն
մեծ խարէութեան զոր կառավարութիւնը Սուլթան Հա-

միտի նենդ քաղաքականութենէն առաջնորդուելով ,
անցեալ շարժու ազդին գլխուն խաղաց : Քանի աղա-
տութեան բանակը կը յառաջանայ և Քիւչիւկ Չէքմէճէն
ու Սան-Սթէֆանօն կը գրաւէ , խաղացուած շարաշուք
խաղին զերակատարները կը փոխին , կամ ծակամուտ
կ'ըլլան և կամ լեզուներն կը փոխեն :

Բայց պատահարները այնքան արագ իրարու կը յա-
ջորդեն , որ այսօր ժողովուրդը տակաւին ապուշ տար-
տամութեան մը մէջ է : Սրտով թէև ազատութեան կողմն
է բայց դորձքով զեռ չի կրնար որոշել թէ ո՞ր կողմին
յակիլը խոհամութիւն է :

Խոհամութիւն բառը զիպուածով չէ որ գրչիս տակ
կուղայ . խոհամութիւնը այս օրերուն համար շատ յատ-
կանշական բառ մըն է : Սուրի , արիւնի և կրակի սար-
սափներուն մէջ ապրած այս հէզ ժողովուրդը չի գիտեր
թէ ո՞րն է իրեն համար փրկութեան ճամբան և միշտ տա-
տամուտ մը ունի իրադարձութիւններու հանդէպ . սր-
շողութիւնը , ջիղը կը պակսի իրմէ մեծ մասին քով որ
ընդդիմութիւն ընող ոյժ մը չի կրնար ըլլալ : Բայց պա-
տասխանատուութիւնը իրեն վրայ չի ծանրանար . քաղա-
քական պայմաններն են որոնք զինքը այդպէս լրած են ,
և այդ պայմաններուն տեղծիչը եղած է Ապա-իւլ-Հա-
միտ , որ ամբողջ 33 տարի դորձած է անխոնջ , ժողովրդ-
դին ապրեցընելով հետզհետէ սուկի դասն տատապանքի
կեանք մը և անոր մէջ ջնջելով ամէն մաքուր զգացում
և կենտականութեան ամէն կորով :

Բու մէլիի բանակին կողմէ պաշարողական վիճակը
լրջօրէն սկսած է Պոլսոյ շուրջ : Բու մէլիին եկած է և կ'ուզէ
վրէժ լուծել Անատօլուէն : Պիտի յաջողի՞ արդեօք : Ահա
մեծ հարցումը որով օրը իրիկուն կ'ըլլայ , և չի պատաս-
խանուած մեծ հարցումին առջև , մարդիկ իրենց տունները
քաշուած , մտովի կ'որոճան :

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 7 ԱՊՐԻԼ 1909

Պարնանային առտուան մը տամուկ արշալոյսը մայրաքաղաքին հորիզոնին վրայէն կը պատուէ անձկութեամբ անցուած զիշերին քողը :

Հայերուս համար, հակառակ կրօնական տօնին, որ սովորական ժամանակներու մէջ առաօտեան հանդիսար երկար վայելելու առիթ մը կ'ըլլայ, շատեր կանուխէն արդէն ոտքի վրայ են : Բայց զործի խորհող չիկայ : Խանութները մեծ մասով դոց են : Ամէնուն ուշադրութիւնը դարձած է դէպ ի Սան-Սթէֆանօ որ դրաւուած է արդէն Ազատութեան Բանակէն, մեծ շունչ մը առնել ապով Պոլսոյ բնակչութեան :

Բերաններու կտակերը ալ քակուած են : Ամէն արուարձաններու թաղերուն մէջ, փողոցներու անկիւնները խումբ խումբ մարդիկ օրուան կացութեան վրայ կը խօսին : Ամէնուն կարծիքն է թէ անարդ բռնակալութիւնը մօտ է օրհասականին : Բայց ինչ տխուր և յատկանշական զուգարիտութիւն մը որ բռնակալութեան վերջին օրերուն կը պատահին Ատանայի նահանգին սհաւոր ջարդերը : Կարծես բռնապետութեան կարապի երգը ըլլալու սահմանուած է սրածութեան այդ խուժողով գործունէութիւնը :

Ինչ որ ալ ըլլայ, մեր մէջն է այսօր, Ազատութեան երջանկաբեր բանակը, որ Մարտ 31ի բռնակալութեան խողէն զայրացած, առանց ականջ կախելու այն հաւատախիքն'ըրուն թէ վտանգ չի կայ սահմանադրութեան համար, եկած է հիմէն քանդելու բռնապետութեան եղեսնով ու արխնով թրծուած բոյնը : Եւ վտանգու յատուկ երկչոտութեամբ, սօփիաները հարիւրներով կը հեռանան Պոլիսէն, ասոնք անդամներն են Իթիթիհատը Մուհամ-

մշտիչէ ընկերակցութեան որ կրօնական գոյնին սակ քա-
ղաքական ծրագրով կ'աւելբ ջախջախել Սամ. Բօմբիէն
և ասով սատարել Ռէաքսիօնի յաջողութեան : Ասոնց
մեկնումով , այդ անիծապարտ ընկերակցութեան շէնքին
քարերն են , որոնք մէկիկ մէկիկ վար կ'ընան , չի կրնա-
լով կուրծք սալ աղատութեան այն զօրաւոր նոտանքին
որ սկսած է արդէն Բուժէլիէն զալ :

Աղատութեան Բանակը սկսած է կանոնաւոր կերպով
պաշարման վիճակի մէջ դնել մայրաքաղաքը , նպատա-
կակէտ ունենալով երկաթը : Ա'լ նպատակը ճշդուած է ,
պատիպատ բացատրութիւններու կամ անուղղակի գոր-
ծունէութիւններու պէտք չէ մնացած : Աղատութեան
Բանակը համոզուած է թէ Ապա-իւլ-Համիտ բուն հեղի-
նակն է խաղացուած խաղին , հետեւապէս յարձակումնե-
րուն վերջին նպատակակէտը որոշուած է երկաթը : Ապա-
իւլ-Համիտ դրամով կաշառեց հասարակ զինուորները , անոնց
չալուհները և սօֆիստները , Շէրիաղը պատրուակ բըռ-
նելով , և նպատակն էր իր իշխանութիւնը վերահաստա-
տել և խաւամական բարեպաշտութեան կեղծ ու սրտիք
պատրուակներով , Սահմանադրութիւնը տապալելու հա-
մար մէկիկ մէկիկ մէջանդէն վերջնել Սահմանադրութեան
հիմերը կազմող ուժերը : Ահա՛ թէ ինչ էր համոզումը
Աղատութեան Բանակին :

Այս պարագաներուն մէջ , կը տեսնուի աւրին թէ
աղատութեան դէմ դաւադրութիւնը պարզուած է և
Սուլթանը կ'ամբաստանուի : Սակայն այս ամէնքը սկիզբն
են եր'յանց : Ժողովուրդին համար կը սկսի նոր վիճակ
մը , որուն մէջ , նոր տազնապալիք կացութիւն մը ծայր
կուտայ , որ գժուար է հիմակուլնէ լսել թէ ս'ւր պիտի
յանդի :

Զգելով որ գէպքերը իրենց բնական ընթացքովը ի-

բարու յաջորդեն , մայրաքաղաքին բնակչութիւնը այսօր
ուխտաւորի յուզմունքով զէպ ի Սան-Սթէֆանօ կը դիմէ :
Սիրքէճիւն երկաթուղիի վակոնները սնագին բազմութիւն
կը տանին զէպ ի այդ գիւղը , որ այս երկրորդ անգամ
է պատմական կը հանդիսանայ : Կայարանէն ներս , զէպ ի
գիւղ՝ ժողովուրդին մուտքը տեղի կ'ունենայ Սելանիկ-
եան ոստիկան-զօրքերու թափանցող ակնարկներուն տակ ,
կը ձերբակալուին կասկածելի մարդիկ , սօֆիստներ ու
խաֆիէներ , բռնակալութեան այդ զարշիլի գործաւորները :

Ազատութեան Բանակին գործելու ծրարիրը , ամե-
նակատարեալ արտայայտութիւնն է Ազգին զգացման և
համոզումին , և շատ ճիշդ կարգադրութեամբ մը այսօր
երեսօխոսաններ և ձերակուտականներ հետզհետէ Սան-
Սթէֆանօ կը փոխադրուին , այնտեղ ազգին ճգնաժամի
սրածուն խորհրդակցութիւններ լնելու , իրենց ձեռքին
տակ իբր գործադիր իշխանութիւն ազատութեան բանա-
կը ունենալով :

Իրագարծութիւնները խիստ արագ յաջորդած են
իրարու և երէկուան Սորհրդարանը որ Թէվֆիք վաշայի
զահլիճին վստահութեան քուէ տալու կամ չի տալու մա-
սին խորհրդակցութիւններ կը կատարէր , հարկաւ վախի
ազդեցութեան տակ , այսօր մէկ անգամէն իր ճշմարիտ
զերին մէջ մտած է և Համբուսան զահլիճի մը զոյու-
թիւնը ուրացած , իր խորհրդակցութիւնները կը նուիրէ
ազատութեան բանակին շարժումներուն մասին իր վստա-
հութեան քուէն տալու , անշուշտ այս անգամ ամենախոր
համոզումով :

Մինչ այս մինչ այն , օրը արդէն իր վերջին հասած
է , և մարդիկ ապագային համար աւելի յուսալից , շատ
բաներ կ'ակնկալեն վաղորդայնէն :

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 8 ԱՊՐԻԼ 1909

«Բռնապետութեան Դաճիճք» օրուան բացատրութիւնն է, Ազատութեան Բանակին ընդհանուր հրամանատար զօրավար Հիւսէյին Հիւսնի փաշայի կողմէ Ազա-
իւլ-Համիտի երեսին նետուած : Ասիկա արդէն ամէնէն բացորոշ նշանն է թէ Ազա-իւլ-Համիտի օրերը համբու-
ած են : Պաշտօնապէս Բռնապետութեան Դաճիճ անուանուած մէկը ա՛լ ի՞նչպէս կրնայ իբր Խալիֆա դահու՛ն վրայ մնալ : Հիւսէյին Հիւսնի փաշայի երէկի երկու պաշտօնական յայ-
տարարութիւններուն մէջ գործածուած այս բացատրութիւ-
նը բաւական մը շունչ առնել կուտայ ժողովուրդին, որով-
հետեւ ա՛լ ամէնուն ոչքը բացուած է և ամէնքը հասկը-
ցած են թէ սառնոց Ազա-իւլ-Համիտի դահճնկէցութեան փրկութիւն չի կայ այս երկրին համար : Քիչ չէ թիւր ա-
նոնց որոնք միայն դահճնկէցութեամբ չեն գոհանար և կ'ըսեն թէ իբր պարզ անհատ անոր ոչջ մնալն ալ միշտ վասնզ մըն է ազգին դիտուն :

Ա՛լ տարակոյս չի վերցնէր, երեսուն երեք տարուան որջին, Երլարդին հեղինակութիւնը սկսած է իյնալ : Մա-
նսազրէն կը հեռազրուի թէ Միւֆթիին կողմէ արուած ֆէթվայի մը վրայ, ժողովուրդը, բանակը և իւլէմաները Սուլթան հռչակեր են դահճատանդ բարձրագատիւ Բէ-
շատ էֆէնտին : Երէկ և առջի օր Սեւանիկէն եկած կա-
ռախու մերումն վրայ «Կեցցէ՛ Բէշատ էֆէնտին» վերստա-
ուութիւնը կը տեսնուէր : Օսմանեան Քօմիթէին գաւա-
ռական ճիւղերէն հետզհետէ հեռազրներ կը հասնին, ծանուցանող թէ նոր դաճիճք չեն ընդունիր իբր սահ-
մանադրական և հետեւարար չեն անսար անոր հրահանգ-
ներուն :

Գալով ազատութեան բանակին գործունէութեան

ըստ երևոյթիս թէև կամայ, բայց իրականութեան մէջ շատ վստահ քաղերով կը յառաջանայ: Մաքրիքէջի վառօդարանը և Տալուա փաշայի ու Բամիզի գորանոցները կ'ըսուի թէ Ազատութեան Բանակին արամադրութեան տակ կը գանուին: Պաշարող բանակին գիծը հետզհետէ կ'անձկանայ մայրաքաղաքին շուրջ, և ամէն օր էտիրնէէն ու Սեւանիկէն նոր գինուորներ կը հասնին, արդէն եղածներուն վրայ աւելնալու համար: Առայժմ Ազատութեան Բանակին կողմէ մեծ զգուշութիւն կայ ծպտած մոլլաներու, սօֆիստներու, խաֆիէներու և կաշառուած սճրադործներու դէմ: Զօրավար Հիւսէյին Հիւսնի փաշալ իր երէկի յայտարարութիւններէն մէկուն մէջ, գինուորական խառութեամբ կը պահանջէ որ Պոլսոյ ցամաքային և ծովային ըմբոստ գօրքերը Շէյխ-իւլ-Իսլամին, Ֆէթիւա էմինիին և աւագ կարգացողներու սուջե Գուրանի վրայ հանդիսաւոր երդում ընեն, հնազանդ և հաւատարիմ գանուելու համար իրենց այն «մէքթէպի» սպաներուն զորս Զատկի Երեքշարթի օրուան ըմբոստութիւնը կազմակերպելու տաթիւ արդելափակած կամ փախուցած էին: Ատկէջ զստ, այս չ'գինուորներէն կը պահանջէ զօրավարը իրենց սպաներուն խոստովանիլ և ըսել անունները անոնց որոնք դրամով և հրապուրանքով գիրենք մոլորեցուցին և իրենց խորհուրդ տուին «Շէրիաթ կ'ուզենք» ըսելու: Այս մոլորեցուցիչները, Ազատութեան Բանակէն կը նկատուին գործիչները բռնապետութեան դահիճին, այսինքն Ապտ-իւլ-Համիաի և Հիւսէյին Հիւսնի փաշա կ'իմացնէ թէ եկած է ամենքն ալ պատժելու: Հիւսէյին Հիւսնի փաշա միւս կողմէն կը յայտարարէ թէ անմեղ ժողովուրդը վախնալու բան մը չունի, և մատնիչները, դաւաղիրները, խաֆիէները, սօֆիսայի կերպարանք մտած եղեւնագործները, «Շէրիադ կ'ու-

դենք» պոռացող դաւաճանները միայն պէտք է վախնան, որովհետեւ անմեղմէ՛ միայն պիտի սրահանջուի թախուած անմեղ արեան և հայրենիքին դէմ գործուած դաւաճանութեան հաշիւը: Ազատութեան Բանակին հրամանատարը շատ կտրուկ կերպով և բացէ ի բաց կը խօսի: Սահմանադրութեան դէմ նիւթուած դաւին վրէժը լուծելու անյողդողդ կամք մը կ'երեւայ իր քով:

Հակառակ Հիւսէյին Հիւանի փաշայի հաւատարմութեան, ժողովուրդին սրտին մէջ ապահովութիւնը շատ խախուտ բան մըն է լսկ, թէ և լաւագոյն օրեր տեսնելու յոյսերը հետզհետէ կը շատնան: Ըսողներ ալ կան որ թէ և Զատիկի երեքշաբթի օրուան պատահածը, հակառակ նախապէս իրենց կարծածին, սէտքսիօնի սամնուվատ փորձ մըն էր, սակայն չարիքէն ապահովապէս բարիք պիտի ծնի, քանի որ չարեաց մայր-աղբիւրը (Ապտ-իւլ-Համիտ) մէջտեղէն պիտի վերնայ, զօրավար Հիւսէյին Հիւանի փաշայի խօսքերով՝ «Սահմանադրութիւնը վերահաստատելու անխորտակելի հիմնքու վրայ, այնպէս որ ամէն ոք համոզուի միանգամ բնո միշտ թէ այս երկրին մէջ սահմանադրութենէն զեր ի վեր ոյժ մը չի կայ այլ եւս»:

Տաղնապի, ճգնաժամի այս պահուն, սպառնքութիւնները շատ արագ կերպով իրարու կը յաջորդեն և երէկուան համակերպող ժողովուրդը բացէ ի բաց իր համամտութիւնը կը յայտնէ Ազատութեան Բանակի հրամանատարին անուանակոչւելիս և զիտակներն ու պարզ ակնարկները ուղղուած են Երլարդի բարձունքը, ուր երբեմն հազիւ կարելի էր գտուենի ակնարկներ գրկել: Ժողովուրդը կը սկսի կամք ցոյց տալ, և բռնկած «Բանակալութեան դահիճ» արժանաւոր սխաղոսէն, երէկուրնէ քիչ մը աւելի բարձրաձայն կ'ըսէ թէ Ապտ-իւլ-Համիտ պէտք է զահրնկէց բլլայ:

Բայց Ազատութեան Բանակը պիտի կրնայ այս գործը ի գլուխ հանել : Պոլսոյ զինուորները պիտի միանան իրեն , ինչ է երլադղի գլխադրութեան ոյժը . ա՛նա՛ հարցումներ որոնց դժուար է սրտչ պատասխաններ տալ և հետևապէս անատուգութեան մէջ նորէն օրը իրիկուն կ'ըլլայ , թէև այս անգամ առկի հաւատք կայ վաղուան վրայ :

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 9 ԱՊՐԻԼ 1909

Ա՛լ կայութիւնը և դիրքերը ճշգուտմ են : Օրուան հարցը Ապու-խւ-Համբաի զահրնկէցութիւնն է : Ա՛յս է ժողովուրդին բերնին մէջ յամաւօրէն շրջան ընող խնդիրը , ա՛յս է Ազատութեան Բանակին առաջին պահանջումը :

Այսքան բացորոշ կերպով Ապու-խւ-Համբաի զահրնկէցութիւնը խ՛ւշիւր ընելը , աչքէն ազայոյլ մնն է ոյժի գլխակցութեան , և իրա՛ւ սլ Օսմանեան մայրաքաղաքը պաշարելու վրայ եղող Ազատութեան Բանակը հեղձհեալ կը նեղցնէ սրաշարման զիծը և կ'ըսուի թէ վաղը Բեաղլահանէէն անցնելով մօտէն պիտի սեղմէ Երլադղը , զինաթիտի ընելու համար 6000 հոգիէ բաղկացած պահապան զօրքը որ հաւատարիմ է կայսեր : Պոլսոյ առջև այժմ կան 36 վաշա հետեւակաղօրք , 15 հեծելախաչա և 72 թնդանօթ : Միւս կողմէ նոր կամաւորներ ամէն օր կը զօրացնեն Ազատութեան Բանակին յառաջապահները որոնք Սան-Աթէֆանոյի մէջ սքանչելիօրէն կը գործեն և ցարդ բանակապետութեան գործիք 120է առկի վասեր ձերբակալուած են նոյն տեղւոյն մէջ :

Սան-Աթէֆանօ , իրր երկրորդ Վէրսայլ մը , մայրաքաղաքին ներկայ ճգնաժամուն մէջ , Ազատութեան Բանակի գործունէութեան ջիղը կը դառնայ , քանի որ , Երեւոյթիսանական ժողով և Մերակոյս այնա՛ղ անդլիական

Եօթինկ Քլլուպի նորաշէն վիլլային մէջ հաւաքուած, ապահով մի՛նտրտախ մը պարզեւած բովանդակ անվեհերութեամբ աղզին ճակատագրովը կը գրաղին և բանակին շարժումները իրենց որոշումներով կը նուիրագործեն: Հոն է Անմէտ Րիզա և հոն կը ժամանէ նաև Ազատութեան հերոս Էնվէր պէյ:

Խանդավառութիւնը անօրինակ է Թուրքիոյ այս վէրսային մէջ և երբ մէկ կողմէն բռնապետութեան գործիչ սօֆիստներ և խաֆիէներ կը ձերբակալուին, միւս կողմէն Պոլսէն խումբ խումբ զինուորներ կուգան հնազանդութիւն յայտնելու Ազատութեան Բանակին, որուն սպաներէն մէկը կը յայտարարէ թէ այժմ կազմ և պատրաստ կը գտնուին 25000 կանտնաւոր զինուոր և 15000 կամաւորներ և թէ այս վերջիններուն մէջ կան մեծահարուստ Ալպանիացիներ, որոնք իրր պարզ զինուոր կը ծառայեն: Ալպանիացի յայտնի յեղափոխապետ Տիմօ ալ իր քաջարի մարդոցմով Ազատութեան Բանակի շարքերուն մէջ կը գանուի:

Այսօրուան ամէնէն կարեւոր իրողութիւններուն գրելու խը պէտք է յիշատակել նաւատորմին Հաւատարմութիւնը Սահմանադրութեան և Ազատութեան Բանակին միացած ըլլալը:

Այսօր Պոլսոյ զինուորներուն երդումի օրն է, որով պիտի խոտաանան Ազատութեան Բանակին հնազանդ ու հաւատարիմ ըլլալ: Այս մասին տեսակ տեսակ բաներ կ'ըսուին: Ժողովուրդին մէջ այն կարծիքը կայ թէ Պոլսոյ զինուորները չպիտի ուզեն պահանջուած երդումը ընել և թէ վերջին պահուն ասոնց և Ազատութեան Բանակի զինուորներուն միջև ընդհարում մը անխուսափելի է: Պոլսոյ զինուորներուն տրամադրութիւնները մօտէն շօշափելով կը տեսնուի թէ հիմնովին հակառակ են Րումէլի բանակին շարժումներուն:

Ապտ-խւլ-Համբախ արժանաւոր դասակ իշխան Պիւրճա-
նէասին, կը հաստատուի թէ, Չաթաղճայէն Երլարդ դա-
ցած թնդանօթածիղ զինուորներուն, վերջին շարաթ իրի-
կուն անձամբ Կոչսերական բարեները հողորդած և շատ
մը մեծարանքներ բնծայած է. թէև շնորհունակ իշխանը
կը հերքէ վկաներով հաստատուած այս ճշմարտութիւնը :

Այսօր կացութիւնը շատ որոշ է : Ամէն մարդ գիտէ
այլևս թէ սահմանադրութեան վերին դասադրոջն է Ապտ-
խւլ-Համբա և թէ վճուած խնդիր մին է իր գահընկէցու-
թիւնը . բայց թէ երբ և ինչպէս, անա խնդիրը : Վատա-
հաթիւն չիկայ Պոլսոյ բանակին վրայ, նոյն իսկ եթէ հա-
ւատարմութեան երդում բնէ, և ազատութեան բանակի
ալ, բոլորովին օտար հող մը արշաւելու զգուշաւորու-
թեամբ մըշտ իր կրնակը կ'ամբացնէ ու քայլ առ քայլ կը
յատաջանայ :

Ապտ-խւլ-Համբա ամէնէն նեղ կացութեան մէջ է .
բայց դեռ կ'իշխէ ինքզինքին վրայ, վեհապետական կա-
մակարութիւնը դեռ չէ կտորած իր մէջ . բանակցութեան
սկսած է Իթթիհատեաններուն հետ և կը յայտարարէ թէ
ցարդ տուտ (?!) ինչ որ պահանջեցին և պատրաստ է
տակաւին տալու (?!) ինչ որ կը պահանջուի իրմէ . բայց երբ
ծայրացեղութեանց զիմուի (եթէ գահընկէցութիւնը պա-
հանջուի ըսել կ'ուզէ), ամէն բան պիտի աւրուի : Ապտ-
խւլ-Համբախ յայտարարութեան այս վերջին մասը իրբ
շատ որոշ սպանալիք մը կ'առնուի . ուրեմն Ազատութեան
Բանակին, սուրի գէմ սուրով, ու մրի գէմ ու մրով
պիտի պատասխանէ Երլարդ :

Այս պարագան կրնայ Ապտ-խւլ-Համբախ հոգեկան
կացութեան վրայ մասնակի գաղտփար մը տալ : Բռնա-
պետութեան գահիճը դեռ կը յուսայ :

Բռնապետութեան գահիճը կը գործէ՛ ալ, երբ հեռու-

ևալ պարագան նկատողութեան առնենք: Չինուորական
ապրտամբութիւնը գրգռած բոլոր սէպարիսներէն երու
ցանկը կը դանուի այժմ Հիւսէյին Հիւսնի փաշայի ձեռքը:
Ասանք 543 հոգի են որոնց մէջ կան պաշտտան 11 պաշ-
տօնեաներ, ի մէջ այլոց ներքինապետ նաաիր աղա և
Անձնական Գանձու նախկին խորհրդական Յալիա էֆէնաի:
Ցանկին մէջ կան նաև 22 բարձրաստիճան անձնաւորու-
թիւններ, 4 հրապարակադիրներ, 17 խմբագիր, իսկ
մթւաները զինուորականներ ու Հօճաներ են: Արդ, այս
ցուցակէն մաս մը կը հրատարակուի ԳՈՒՆ իէ s'Օրիանի
մէջ, զոր Ապտ-խւլ-Համիտ ինք անձամբ հաղորդեր է,
և որուն մէջ Պէրութի երեսօտիանն Բամայիլ Բէճալ պէյի,
Աքրայեսիի անօրէն Մէլլանդասէ Բիֆաթ էֆէնաիի
Իլցամի խմբադրապետ Ալի Բէճալ պէյի նման անձնաւո-
րութիւններու անուաները կան, ահաւասիկ նորէն մնքե-
նայութիւն մը Ահրարներն ու Իթթիհատեանները իրարու
դէմ հանելու, որպէսզի ինք չըլլայ ուշադրութեանց
առանցքը, բայց փորձուածը հինցած խաղ մըն է և խար-
ուողներ չի կան ասկից: Աւրիշ կէտ մըն ալ կայ. եթէ
Ապտ-խւլ-Համիտ բոլորովին անմասն էր եղած դաւաձա-
նութեան, ինչպէս ինքը կը փորձէ հաւատացնել, ուրեմն
ինչպէս կրնար ամէն բանէ տեղեակի պէս, այդ դաւա-
ճաններուն ցուցակը հաղորդել Օսմանեան Փօմիդէին:

Արիւնահեղութեանց ճեւապատկերը նորէն կը
մթաղնէ Մայրաքաղաքի բնակչութեան հորիզոնը, որով-
հետև շատ մը զրոյցներ կան թէ Կարմիր Սուլթանը
սպառնացած ըլլայ ամենավերջին պահուն մայրաքաղաքը
կրակի տալ Երզարդի թնդանօթներով:

ՈՒՐԲԱԹ, 10 ԱՊՐԻԼ 1909

Ազատութեան բանակին՝ Պոլսոյ պարիսպներուն առջև հաննելէն ի վեր վեց օրեր անցած են արդէն, և ժողովուրդը տեսնելով որ «Մեծ Եզելութիւնը», այսինքն Ազա-խ-Համբախի դահրնկէցութիւնը կ'ուշանայ իրականացած ըլլալէ, անհամբերութեան նշաններ ցոյց կու տայ: Տեսակ մը սրտարեկումով կը խորհի ամէն մարդ թէ Սէլամըքի հանդէսի մը ևս պիտի արժանանայ Կարմիր Սուլթանը: Եւ ժողովուրդին հոգեբանութեան տեսակէտէն շատ յատկանշական կերպով այսօրուան կը հանդիպին թերթերու այն բուն հրատարակութիւնները, որոնց մէջ, կենդանական թագաւորութեան ամէնէն զազիր ներկայացուցիչներուն անունները փոխ առնուած են Ազա-խ-Համբախ որակելու համար: «Արեան ծովերու շանաձուկը», «արխնաքաժ վամբիւրը», «Բորենին» կրնան նմոյշներ ըլլալ այս մտայն: Մամուլը իր երևան ի վեր կը պուսոյ թէ Սուլթան Մուրատի դահրնկէցութեամբ երկրին գլխուն փորձանք մը եղաւ, պատճառ եղաւ Պոսնա-Հէրսէքի և Սերպիոյ սպրտամբութեանց, ձեռնարկեց Ռուսիոյ դէմ պատերազմին ու ազգին գլխուն խոշոր փորձանք մը բացաւ, Երլորդէն գործած մեքենայութիւններովը ջլատեց հրամանատարները, ուստի բանակը բերաւ Սան-Սթէֆանօ և երկիրը բռնապետութեան մատնեց, տօնելով և ցնծալով սատր վրայ: ձեռքէ հանեց Կարսը, Արտահանը, Պաթուսը, Զիլիպէն, Պոսնա-Հէրսէքը, Եզիպատար, Թունուզը, Կիպրոսը, Կրեալէն, Թեսալիան, որով մեր հայրենիքէն անջատած եղաւ 25 միլիոն ժողովուրդ: այս մարդը ամօթ մըն է ազգին համար: քանի՛ ինքը մեծցաւ ազգը պզտիկցաւ, նաւատորմը որ աշխարհի երկրորդ նաւատորմն էր, փճացաւ իր ձեռքով, որովհետեւ Հասան և ընչալ փաշաներու պէս

խայտառակներու ձեռքը յանձներ էր դայն : Չամչնալով ձարոն նաւ դրկելու ելաւ և 500 ընտիր սպաներ գրաւ էրթողուլ կոչուած փտտած նաւուն մէջ, պարզապէս նպատակ ունենալով դանոնք փճայն լ : Հայկական խնդիրը յարուցանելով Ազգին գլխուն խոշոր փորձանք մը բերաւ , Անաստուան ծայրէ ի ծայր հուրի և սուրի մասնակով Երւարդէն դիտեց և ուրախացաւ : Սուլթան Համիտ տէրութեան դանձր լրտեսներուն գրպանը լեցուց , Իզգէթին նման խայտառակի մը կողոպտել տուաւ այրիներու և որրերու գրամը , Սէլիմ Մէլհամէի ծախել տուաւ երկրին անտառներն ու հանքերը , Ֆէհրմին ազատ համարձակ թողաւ ութիւն տուաւ որ մարդ կողոպտէ ու շատ հաւանական է որ շո՛ւռ ընկերն էր ասանց : Այս բաները մոռնալ ամօթ է և կրօնքի ու տէրութեան դէմ նախաաինք : Յուլիսին սակայն Ազգը պոթկաց , Սուլթան Համիտ հասկցաւ կացութեան ծանրութիւնը և փորձեց վատերու վերագրել բոլոր անցած դէպքերը և վերահատատեաց Սահմանադրութիւնը : Բայց վատ կոչած հէրիֆները իր բնարած մարդիկն էին սրոնք ազգը կը կողոպտէին : Ազգը պահանջեց որ Սուլթան Համիտ երգում ընէ , երգում ըրաւ , սակայն միւս կողմէն ալ մարդիկ կաշառեց և պատրաստեց Մարտ ՅԱԷՆ ի վեր տեղի ունեցող դէպքերը : Ինչպէս որ Սուլթան Ազիզի գահընկէցութեան վրայ նաւատորմին թշնամի եղաւ , անանկ ալ սահմանադրութեան հրատարակութենէն ետքը դպրոցական սպաներուն թշնամի դարձաւ , քանի որ անոնք ամէնէն աւելի աշխատած էին ի նպատակ ազատութեան : Զարդէլ տուաւ այս սպաները : Այս հրէշին ամենամեծ ցնծութիւնը եղած է արդէն արիւն թափել ամէն տանն , ու եթէ չուզուիր որ ա՛լ աւելի մեծ արիւնահեղութիւն ըլլայ պէտք է հրամարի գահէն ինչ որ 33 տարիէ ի վեր ըրած միակ խէրը

պիտի ըլլայ : Գալով իր կեանքին , ազգը այնքան վեհանձն է որ կրնայ զայն ապահովել :

Այս , ասոր նման ու ասկից աւելի բուն դատաստաններ կ'ըլլան Ապտ-խւլ-Համբաի մասին , առօրեայ ամէն լեզուէ մամուլին մէջ , և ասկայն , ինչ զառն հեղնութիւն , զինուորական շեփորները կը լսուին , ու վաշտերը սակեձամուկ , կանցնին Պոլսոյ ու Ղալաթիոյ փողոցներէն , ուղղուելով դէպ ի Երլարդ , տօնելու համար խալիֆային Սէլամըքի հանգիստուոր զնացքը :

Իբր գէշ նշան մը կը մեկնուի այս բանը ժողովուրդին կողմէ , որ միշտ կասկածը ու վախը սրաին մէջ ունի արդէն , և զործի գացողները , կէս օրէ առաջ կը փակին իրենց խանութները և տուն կը վերադառնան :

Սուլթանը ին փառքին մէջ է տակաւին և Սէլամըքի թափօրը տեղի կ'աւնենայ մեծաշուք : Երթուղարծի տուն , հան խանուած հասարակ դատակարգի մարդիկ և զօրքերը կը ծափահարեն ու («Բասիլահըմ չօք եաշա») կը պտտան : Սրը շատ հակասական է . մէկ կողմէ յուսադրութիւններ և միւս կողմէն յուսախարութիւններ : Եւ ահա՛ ժամը մին յանկարծական խուճապ մին է կը սկսի Տալուա փաշայի զօրանոցէն մինչև Թօխանէ , անցնելով Պոլսոյ ու Ղալաթիոյ գլխաւոր փողոցներէն . խելացեղ զինուորներն որոնք կը վազեն փողոցներն ի վար , պտտւով «Միլահը օլմայան , սիլահա՛» , (զէնք չունեցողները զէնքի) : Ասոնք Տալուա փաշայի զօրանոցին զինուորներն են որոնց Սէլամըքի երթալէն օգտուելով , Ազատութեան Բանակի զինուորները դրուած են այդ զօրանոցը : Ուրեմն Ազատութեան Բանակը Պոլսոյ սահմաններուն վրայ է :

Այս ճախորդ օրուան վերջին նորութիւնն է Ազատութեան բանակին հրամանատար Շէվքէզ փաշայի մէկ յայտարարութիւնը որուն մէջ կ'ըսուի , «Պատիժէ սար-

տախտը կարգ մը խռովարարներու և վատերու կողմէ լուր հանուած է թէ իբր թէ Բ. և Գ. զօրաբանակը եկած է Սուլթանը գահընկէց ընելու նպատակով : Այս բանը բացարձակ կերպով կը հերքուի հրամանատարութեան կողմէ և կը յայտարարուի թէ երբ շարժան բանակի գինուորներու պարտականութեան կատարման միջոցին խռովարարներ ու վատեր յանդգնին նոր գրգռմաներով գէպքերու պատճառ ըլլալ, առանց պատասխանատուութիւնը ամբողջովին պիտի ծանրանայ պատճառ եղողներուն վրայ :

Մամուլ ու ժողովուրդ Ապտ-խւլ-Համիտի գահընկէցութիւնը իբր վճուած բան մը նկատած են, որով շարժան բանակի հրամանատարին յայտարարութիւնը մտքերը տակն ու վրայ կ'ընէ : Անմիջապէս մայրաքաղաքի բնակչութեան շրջանը կ'ընէ սա խօսքը թէ Սուլթանին գահընկէցութիւնը տեղի չպիտի ունենայ և այս յեղաշրջումը կը բացատրուի անով որ Թուրքիա անակնկալներու երկիրն է ուր շատ անգամ կարելի չէ արամարանութիւն փնտուել իրողութիւններու յաջորդականութեան մէջ : Կարծես թէ այս օրը ահաւոր յուսախաբութիւններու օր մը եղաւ և կէսօրուան Սէլամըքի թափօրը ու Մահմուտ Շէյքէթի փաշայի վերի պաշտօնական յայտարարութիւնը կ'ըլլան դամբանականը մէկ քանի օրէ ի վեր սնուցուած ամէնէն զեզեցիկ երազներուն :

ՇԱԲԱԹ, 11 ԱՊՐԻԼ 1909

Աստուն կանուխ ամբողջ Պոլիս կ'արժննայ ընդոտտ, երկարաձգուող որոտումի նմանող հրացանաձգութեան ձայնէ մը : Սարսափի մէջ ամէն մարդ փողոցները կը թափի և քիչ առհնէն արդէն կը հասկցուի թէ ճակատամարտը սկսուած է Ազատութեան Բանակին և Պոլսոյ գինուորնե-

բուն միջև . վերջապէս իրականացած է Ապտ-խւլ-Համիրտի դիւային գաղափարը և նոյն հայրենիքին պաշտպան զին-ւորները զիրար կը կոտորեն : Ժողովուրդին կասկածներն ալ արդարացած են թէ Պուլտոյ զինուորները մինչև վերջը պիտի պաշտպանեն իրենց գաղանարարոյ պետը , Ապտ-խւլ-Համիրտ : Մասնաւորապէս Բերայի մէջ սարսափը շատ աւելի մեծ է , ուր շատ մօտէն հրացանաձգութեան բուն շաշխնը լսելով մահիճներէն դուրս նետուած են շատեր : Ըակատամարտը տեղի կ'ունենար դարնան այս զեղեցիկ առտուն , Թաջ Գրչլայի հետեւակներու զօրանոցին , Մաչքայի կեղբոնական բանակի զէնքերու մեծ մթերանոցին , թնդանօթածիգներու զօրանոցին և հեծելազօրքերու զօրանոցին դէմ մրանդամայն : Ազատութեան Բանակը բացած է իր արագահարուած հրետանիները և կրակ կը տեղայ այս զօրանոցներուն դէմ : Ասոնք երկար ժամ արտաքին զլխաւոր պատուարներն են , որոնք բուն ընդդիմութիւն մը ցոյց կուտան սկիզբները : Սակայն Ազատութեան Բանակը հիանալիօրէն կատարած է զինուորական շարժումը , և որտեղ գունդը , թեթեալէն սահիլ-բաներու վաշտը և արծակազէն կամաւորներու գումարտակներ , լրիկ մեջիկ վար իջնելով Թաթալլայի և Այ Տիմիդրիի բարձունքէն և Տօլապ Տէրէի հեղեղատները քերելով և Թալիմհանէէն ու Ս . Յակոբայ սնկելանոցը եզերող ձորակներուն մէջէն սողալով , վերոյիշեալ զօրանոցներուն հանդէպ զիրքեր բռնած են արդէն :

Միւս կողմէն Ազատութեան Բանակին թնդանօթներն ալ Օգ Մէլտանէն Քասրմ վաշայի հովիտը իջեցնելով , Բերայի կեղբոնը կը հանեն , զօրանոցներու հետի կողմէն դարնելու նպատակով : Քասրմ վաշայի ձորէն թնթանօթները վեր հանելու դմնդակ աշխատութեան , կարիճ Հայեր և Բերայի Հայ ջրհանկիրներ ինքնայօժար մեծ աջակցութիւն

ցոյց կուտան, և միտցած Ազատութեան պաշտպան Հերոսներուն՝ թնդանօթները քաշելով վեր կը հանեն մինչև Թագօթ :

Կուրք երկուտեք կատաղութեամբ կը շարունակուի : Բումէլիի զինուորները յանկարծակիի բերած վերոյիշեալ Համբոսեան զօրանոցները, գետին փռուած հողի մէջ մի պատասուածքէ օգոտ քաղելով՝ մարմինը սքողելու համար և նոյն խակ մէյմէկ քարի կտորի ետև գլուխնին պատշապարելով, և նշան առնելով զօրանոցներու պատուհաններուն ու պատնէշներուն, անվերջ կը շարունակեն հրացանաձգութիւնը :

Ազատութեան Բանակը այսպէս ստիպուած է ճշմարիտ ճակատամարտ մը մղելու որովհետև կարմիր Սուլթանը չի հրամ ցեց Պոլսոյ բանակին որ սուանց կոխի եղբայրակցէր Բ. և Գ. բանակներուն հետ :

Այս վերջին գիշերը Տալուտ փաշայի զօրանոցէն վերջը Ազատութեան Բանակը յանկարծակի յարձակմամբ գրաւած էր նմանապէս Բամիդի և էյուպի զօրանոցները, թեթև ընդդիմութեան մը միայն հանդիպելով, խակ սուանց ընդդիմութեան գրաւած էր Սասգիւղի զօրանոցը, փամփրշտանոցը և յետոյ նուարանը :

Ինչպէս կը տեսնուի ուրբաթ կէս գիշերէն վերջ Մահմուտ Շէյքէթի փաշայի բանակը ձեռնարկած է լրջօրէն դործելու, սուաջին շարքերուն մէջ ունենալով նաև Պուկար հրոսասպետ Բանիցայի կամաւորներու գունդը : Պոլսոյ զօրքերուն կողմէ անձնատուտութիւնը շատ դիւրին կերպով տեղի կ'ունենայ և ընդդիմութիւններն ալ շատ խեղճ են, որովհետև սպաները ամբողջ անցած են Ազատութեան Բանակին կողմը և Չալուշներն ու սօֆիաները անգէն մարդոց դէմ միայն կրնան զինեալ յարձակում մը կազմակերպել : Ամբողջ վեց ժամ ճակատամարտը շարու-

Նակուեցաւ այս առաւ Բերայի մէջ, որու միջոցին անգամ մը թնդանօթածիղներու զօրանոցը անձնատուութեան դրօշը պարզեց, բայց յետոյ վատարար խարեց դէպ ինքը եկող յաղթական որսորդ զինուորները, վայրագարար անոնց վրայ նորէն կրակ ընելով և շատ մը քաջեր ինկան ցածոգի թշնամբին նենդ գնտակներէն: Ասիկա նշան մը եղաւ որ կռիւք աւելի բուռն ըլլայ: Ազատութեան Բանակը ասոր վրայ իր թնդանօթները անցուց ջրհանկիրներու գունդին շէնքէն և Մարզարանին մէջ զետեղելով, թնդանօթով քայքայեց զինուորական վատութեան բոյն այդ զօրանոցին մէկ մասը: Ճիշտ այս միջոցին, կամաւորներու յանդուգն զումարտակ մըն ալ Յէրիախէյի և Մարզարանին միջևէն անցնելով ու փողոցի անկիւնները ապաստանելով, Թագսիմէն կողմնակի յարձակում մը գործեց այն տեղի պահականոցին վրայ որ մոլեղնարար կը պատասխանէր:

Բանկալթիի Հայոց գերեզմանատունն ալ Ազատութեան Բանակէն զունդ մը զետեղուած էր որ սազմամթերքը Հայոց եկեղեցիին մէջ սպահովցնելով, զբաւեց Թագսիմի հանրային պարտէզը: Հայոց գերեզմանատան մէջ կային նաև թնդանօթներ որանք շարունակ կը սմբակօժէին Մաշգան, Թաշ Գըշլան և թնդանօթածիղներու զօրանոցը միանգամայն. խի մըս կողմէն Բանկալթիի պատերազմական վարժարանն ալ, ուր ասկից բռնակալութեան ճիրաններով Ազատութեան ոգին միշտ բզկտուած էր, հիմա իր թնթանօթները բացած կը գտար Թաշ Գըշլայի դէմ, վրէժ լուծելով անոր վատութենէն որով աստուհ նենդութեամբ գնդակահար բրած էր զինուորական ուսանողներու քաջտիրտ խումբ մը, որ Բերայի պահպանութիւնը ստանձնելու համար առաւուն կանուխ վարկիջներ:

Ուրեմն կախի դաշտը կը տարածուէր Ֆէրիտիյէէն ,
Ս . Յարութիւն եկեղեցւոյ փողոցէն մինչև Բանկալիի ե
Նշան թաղ :

Միջօրէին տունները Ազատութեան Բանակի թնդա-
նօթներուն ե հրացաններուն ուղիղ նշանատութիւնը յազ-
թահարեց Համրտեան վատուգի զինուորներուն , ե զօրա-
նոցները իրարու հակէ անձնատուր եղան , երկու կողմէն
հազար հոգիի շտի կորուստ արուելէ վերջ , որուն մեծ
մասը Համրտեան էին :

Երբ այսպէս կատաղութեամբ , բուն հրացանաձգու-
թիւններով ե ուսմբերու որոտումներով կախը կը շարու-
նակուէր Բերայի բարձունքին վրայ , անդին մայրաքա-
ղաքի բոլոր արուարձանները շատ քիչ բան մնայն կրնա-
յին գիտնալ պատահածներուն վրայ : Արդէն արշալոյսէն
սկսելով մայրաքաղաքին բոլոր հազարակցութիւնները
խզուած էին բացարձակապէս ու Ղալաթիոյ կամուրջն ալ
իր երկու գլուխներով դրսւում էր Ազատութեան Բանակի
զինուորներով : Մայրաքաղաքի բնակչութեան իւրաքան-
չիւր հասում իր անդին մէջ կղզիանալու դասապար-
տում էր :

Ահաւասիկ նոր անձկութիւն մը ամբողջ մայրաքա-
ղաքի բնակչութեան համար : Ամենատնձուկ վիճակ մը ,
որուն վերջը անկարելի է առաջուրնէ գուշակել : Կէսօրին
հրացանաձգութիւնները ե թնդանօցներու որոտումը
զազրեցու , սղատիկ շունչ մը սկսաւ սանկ մայրաքաղա-
քին հէզ ժողովուրդը :

Ու ա՛լ անկից վերջ , Պէշիկթաշի ե Սրթաքէոյի
շուրջը ե գիմացը գանուոյ արուարձանները հաւաքա-
վայրը եղան փախստական զինուորներու , որոնցմէ առաջին
համազները կրակին առջևէն փախածներն էին , առանց
զէնքի , նոյն խակ գլուխներն բաց , որոնք դողալով ե աչ-

քերնին արցունքով կը պատմէին թէ ինչպէս իրենց ընկերները, արագահարուած գործիքներէ տեղացոյզ գնատակներէն, մանդաղէն հնձուած խտտերու պէս գեախն կ'իյնային: Այս պատմութիւնները կ'ընէին իրենց ազատանասեղիի զէնքի ընկերներուն, որոնք թէև կը հայհոյէին մէքիմէպլիներուն և սակայն զիւրին էր տեսնել որ կը սրժողունէին, քանի որ զխաւէին թէ իրենք ալ մասնակից ըլլալով Մարտ Յլի դաւաճան ու մեղաւոր ցոյցին, կրնային նոյն պատուհասին հանդիպիլ: Այս ամէնուն մէջ բարերար բան մը կար սակայն. այդ առանց զէնքի փոխատական զինուորները, իրենց հասած տեղերու զէնքի եզրայրներուն մէջ կը զնէին ահարկու վախ մը Ազատութեան Բանակին հանդէպ:

Բարերար բան մըն էր ասիկա, քանի որ Ազատութեան թշնամիներուն մէջ ասրասփը կը մանէր և ասրասփած թշնամիներուն շատ զիւրին պիտի ըլլար յաղթել եթէ նոյն խակ թիւով ու սաղմական և այլ տեսակէաներով դերասանց ըլլային անոնք:

Կէս օրէ վերջ սակայն կացութիւնը յանկարծ փոխուեցաւ, որովհետև կէս օրէ առջի առանց զէնքի և լեզու պատաս եղած զինուորներուն տեղ, հետզհետէ հասան զինուած զինուորներ, մինչև կօշիկներուն մէջ փամփուշտներով լեցուն: Ասոնք Նըլտըզի անմիջական շրջափակին մէջ գտնուող զօրանոցներէն փոխած են առանց տակաւին կուռելու պատենութիւնը ունեցած ըլլալու, և հիմա անզէն ժողովուրդին մէջ է որ վախ կ'ազդեն: Ասոնց թիւը մասնաւորապէս Սկիւտարի բարձունքներուն վրայ տակաւ կը տուարանայ և այն տեղ Հայ սոցալարնակութեան համար ահաւասիկ նորէն արհաւիրքներ:

Այսօր է որ Նըլտըզի շրջափակին մէջ, կէս օրուան մէկ քանի ժամերուն սպիտակ դրօշ մը կ'երեւայ, խորհրդ-

դանչան անձնատուութեան, և սրտերու մէջ մինչև աս-
տիճան մը ապահովութիւն կը բերէ և որ իրիկուան դէմ
նորէն վար կ'աւնտի սրտերու մէջէն ալ ստնել իրեն
հետ տանելով սպաճովութեան յետին նշոյցը: Սպիտակ
զրօշին՝ Երլարզի բարձունքէն անհետանալուն հետ կը
զուգադիպի զինեալ զինուորներու հետզհետէ ստուարա-
նայր, որոնք նաւակներով բնդհանրապէս Օրթաքէօյէն
Գուգիուհնուք կ'անցնին և Սկիւտարի ամէն մասերուն
մէջ կը տարածուին: Ահա նորէն անապահովութիւն մը ժո-
ղովուրդին մէջ, ուր ամէն ոք կը զգայ թէ այդ զիշերը
իր կեանքին և ինչքին տէրը չէ: Մասնաւորապէս Հայերս
Հայաշատ արուարձաններու մէջ անապահովութեան ամէն
պատճառներ ունինք: Բայց Հայ քաղաք կուսակցու-
թեանց պատկանող անվեհեր կարիճներ, որոնք վերջին
տագնապի ամբողջ ընթացքին զիշերային պահակի դերը
ստանձնած էին արուարձաններու մէջ, կը պատրաստուին
մօտեցող զիշերին մէջ վերահաս վտանգին դէմ ճակատիլ:

Սկիւտարի մէջ մանաւանդ, ուր Հայ զիւղերը ամ-
բողջ փայտաչէն են, մարդիկ մասնաւորապէս անապահով
կը զգան ինքզինքնին յարձակումներէն այն խուժանին,
ուրկէ շրջապատուած են և դուրսի պահակներէն զատ
կ'որոշուի որ ամէն մարդ ալ իր տան մէջ զիրք բռնէ,
պատրաստ ամէն պատահականութեան զիմազբաւելու:

Օրը արդէն տարածամած է և բոլոր արուարձան-
ներու մէջ, պատահածներու մասին ստոյգ լուրերը կը
պակսին:

Վաղուան անձկութեամբ ամէնուն սիրտը ուսած և
միտքը յոգնած է, և ինքզինքնին կը յանձնեն զիշերուան
հանդարտութեան, որուն քողը կարծես թէ դաւաճանօրէն
կը պատէ լուսնին մահիկը:

Այս զիշերը արնութեան և սպասումներու զիշեր
մը կզաւ մայրաքաղաքին համար:

ԿԻՐԱԿԻ, 12 ԱՊՐԻԼ 1909

Գիշերը առանց վառնդի անցաւ և կիրակի առտու իր խորհրդաւոր հանդարտութեամբը շատ բան կը խօսի արուարձաններու բնակիչներուն, միայն չենք գիտեր թէ խօսուածները նպատաւոր թէ աննպատակ կրնային ըլլալ Ազատութեան դատին համար: Երէկ առտունէ ի վեր որդի պէս ամէնուն սիրտը ու միտքը կը կրճէ Մահմուտ Շէվքէթ փաշայի այն յայտարարութիւնը թէ Սուլթանը գահընկէց բնելու չեն եկած:

Սակայն առաւօտեան ժամերուն հետզհետէ հասնող լուրերը սրտասնդիչ են ժողովրդին համար: Հիմա ա՛լ գիտենք թէ երէկուան ճակատամարտը փաղուն յաղթանակ մը եղած է Ազատութեան Բանակին համար, Համբուսեան զինուորները ջախջախուած են, և Երւարդի պաշտպանութեան արտաքին զիծը արդէն քանդուած է բոլորովին, և հան Ազատութեան Բանակին քաջերը կը կանգնին հիմա, խրոխտ ու յաղթական:

Բերայի զօրանոցներուն անձնատուութենէն վերջ, հիմա ամբողջ ժողովուրդը անհամբեր է Երւարդին անկումը տեսնելու: Բայց Պէշիկթաշի բարձունքին վրայ, պաշարողական կամ յարձակողական որ և է գործողութիւն չի տեսնուիր զխտակով զխտոյններուն աչքին: Մէկ կողմէն թէև մտատանջութիւն պատճառելու հանգամանք ունի այս հանդարտութիւնը, բայց միւս կողմէն կ'ըսուի թէ Պալատան զօրքերը ինքնին քայքայման նըշաններ կը ցուցնեն, անձնատուր ըլլալով ու փախչելով, և Ազատութեան Բանակը խոհեմութիւն կը սեպէ հետեւարար, քիչ մը ևս սպասել:

Կռիւի սկզբնաւորութեան երէկ առտու, 6000 զին-

ու որ կար երջարգի անմիջական շրջափակին զօրանոցներուն մէջ, բայց կ'ըսուի թէ չիմա, մէկ օրուան մէջ, հազիւ 3000 մնացած է:

Այս սուսուօս Վասիտրի Անաստուրի եղերքը, մանաւանդ Սկիւտար մեծ անձկութեան մէջ են. Սէլիմիյէի խնդիրը ամէնէն սուելի կը զբաղեցնէ զիրենք: Իբրա է որ կ'ըսուի թէ այդ զօրանոցը իր մէկ քանի հազար զինուորներով Ազատութեան Բանակին կողմը անցած է, բայց ափկա բան մը չ'ենթադրեր քանի որ ամէնէն վերջին վայրկեանին կրնայ զրժեկ խոստումը:

Սկիւտարցիներու համար, հետեւապէս, Սէլիմիյէի խնդիրը պահ մը երջարգի վրայ նախաազատութիւն կը ստանայ:

Կէս օրէ սուսջ եւրոպական եղերքէն լուր կուգայ թէ Ազատութեան Բանակը Բերայէն Թօրհանէ իջնելով այս տեղն ալ զբաւած է և ծովեղերքէն յառաջանալով մինչև Պէշիկթաշ հասած է զբաւելով բոլոր մեծ ու փոքր զօրանոցները և թէ սպահովութիւնը կատարեալ է այս տեղուանքը:

Հազիւ թէ քիչ մը քաջալերական այս լուրերով հանգարած, և ահա՛ Սկիւտարի Քրիստոնեայ բնակչութեան մէջ կոյծակի արագութեամբ կը տարածուի թէ Ազատութեան Բանակը ոտք դրած է արդէն Ափական ցամաքի վրայ և բարձունքներուն վրայ ելլելով ժողովուրդը կը տեսնէ որ Շիրքէթի վեց շոգենաւեր Սիրքէճիէն և Քապաթաշէն զօրք ու հրետանի կ'ափսոսողրեն Հարէմ իսկէլէսի և Գուդկունճուդ: Մէկ անգամէն, ադատա շապիկի մը պէս ժողովուրդը վրայէն կը նեակ զիշերուան արձախրքը և Քիւրտերու, Գնչուներու և կասկածելի ամէն տեսակ գոյութիւններու վոհմակները, որոնք մինչև այն ստեն սպասնալիքներ էին իրեն դէմ,

խօսոյն կը կորնչին անհետ, Ազատութեան Բանակի փրկարար երեսօմին առջեւ :

Ակիւտօրէն սկսելով մինչեւ Պէյքօզ բոլոր զօրանոցներու գրաւումը տեղի ունեցաւ այսօր Ազատութեան Բանակին կողմէ, մէջը լլալով նաև Աէլիմիէ զօրանոցը, որով միջառանջ մը կը վերնայ այդ զօրանոցին շուրջի բոլոր բնակչութիւններուն վրայէն :

Զօրանոցներու, մանաւանդ քրիստոնեայ թաղերու մէջ գտնուած քարաքոյներու գրաւումը տեղի կ'ունենայ բոլոր թաղեցիներու սրտընդատա ծափահարութիւններուն, և հուրբայի բամբ գոչիւններուն մէջտեղ : Ալ սպասօրէն կը սկսինք չնչել, կանախիս Ազատութեան Բանակի վերին ատօմների համակրելի քաջերուն տուած :

Ալ սպասոված կեանքերնիս, աշաղրութիւննիս նօրէն կը դարձնենք գէպի ելլալը, որ իր անթափանցելի հանդարտութեան մէջ կը յամտտի դեռ մնալ : Ազատութեան Բանակի զինուորներ, որոնք ամէն թաղերու զինուորական կայաններու մէջ հաստատուած են, կը մտերմանան ժողովուրդին հետ և կ'ըսեն թէ մինչեւ վաղը առաւօտ ելլալդին գործն ալ պիտի կարգադրուի : Յաղթականի վատահ շեշար կայ իրենց խօսուածքին մէջ, որ մեզի ալ կը փոխանցուի : Եւ համադրուած՝ վաղորդայնին կը սպասենք ու զիշերը վրայ համեկուն կը քաշուինք մեր տուները, Զատիկի երեքշաբթիէն ի վեր առաջին անգամ լլալով քնանալու համար, արդարներու հանդարտ անվիրով քունը :

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 13 ԱՊՐԻԼ 1909

Շաբաթ առաւօտունէ վերջ թերթերը ալ չէին հրատարակուած, և ժողովուրդին երեսակայութիւնը ճշմարտութիւններու վրայ շատ մը անձողութիւններ ալ աւելցուցած էր :

Այս առաու թերթերը կը հրատարակուին, որոնցմէ կը հասկցուի թէ Ազատութեան Բանակը կատարեալ աւերն է Մայրաքաղաքին, Սուլթանն Համիտ օձիքը չի կրնար ազատել, Մայրաքաղաքին մէջ Ազատութեան Բանակին կողմէ պաշարման վիճակ հրատարակուած է և Համբուսեան բոլոր անարգ ցեղերուն, սօֆիստներու, խաֆիզներու, վատ պաշտօնաստորներու և զինուորներու ձեռքակալութիւնը կը շարունակուի կատաղօրէն, որոնք իրենց ձեռքով երբեմն անմեղ Հայեր սպաննած էին :

Այս ամէնուն մէջ մեծագոյն իրողութիւնը սա է թէ Ապտ-իւլ-Համիտ դադանը ստիպուած է արիւնով յանձնելու այն գահը զոր արիւնով ձեռք անցուցած էր :

Ան ու սարսափը հիմա անմեղ ժողովուրդէն փոխադրուած է սահմանադրութեան ընդդիմացողներու և աէաքսիօնէսներու վրայ, որովհետև Ազատութեան Բանակը մահուամբ միայն որոշած է պատժել այս վերջինները :

Այսօր, վերջին վախ մըն ալ մնացած է : Կասկած կը յայտնուի որ Ապտ-իւլ-Համիտ վերջին պահուն յաղուրդ տալու համար իր արիւնարբու խառնուածքին, հրաման ընէ ամէն կողմ ուժակոծել Երլարզի թնդանօթներով ու ինքն ալ անձնասպան ըլլայ : Բայց միւս կողմէ սա ապահովութիւնը կայ թէ իրեն պէս վատասիրտ մէկը, որ իր կեանքին սիրուն համար ամբողջ 30 միլիոն ժողովուրդ 33 տարի դանձօրէն տատապեցուցած է, երբէք կարող չէ անձնասպանութիւն փորձել, հետեւարար սպասուած ուժակոծութիւնն ալ գրեթէ անկարելի է :

Երլարզի հողեվարքի ժամերն են որոնք կ'անցնին այսօր : Ազատութեան Բանակը արդէն կտրած է Ապտ-իւլ-Համիտի որջին ջուրի ձամբաները, օգոյնին կազի խողովակները, շրջափակէն դուրս գանուած ելեքտրակաշտութեան կեղբոնը խանդարած է, դուրսի հեռ հազար-

դակցութեանն հետադրաթիւերը խզած է, ու սրաշարման խիստ շղթայի մը մէջ առած, ներսէն դուրս ելլողները կը ձերբակալէ և դուրսէն ներս ոչ ոք ու ոչինչ կը թողու :

Այսօր կէսօրէ առաջ Ազատութեան Բանակէն հասեւակազօրքեր ու հեծելազօրքեր, Պալմոմիճի Չիֆղլիկի վրայէն Երլտըզի ետեւի կողմը վեց նոր թնդանօթներ կը զեակեցնեն, ա՛հ ու սարսափ տիտելով Երլտըզի բնակիչներուն, որոնք 4000 հողիի շափ, կ'լտուի թէ այս առտու սպտած ըլլալով սնունդի ամէն սրաշար, շողզամի ու ճակընդեղի տերեւներ կերած են, սկսելով Ապտ-իւլ-Համիտէն : Իսկ ամէնէն բախտաւորները կ'երեւան Երլտըզի պարտէզներուն մէջ պահուած ասորաշխարհիկ կենդանիները, տարօրինակ ուղակեր և ուղտանման սապատաւոր արարածներ, որոնք օգտուելով պահապաններէն բացակայութենէն, մշակուած ածուներու մէջ կ'արածին : Լքումը բացարձակ դրոշմը կ'երեւի Համիտեան շրջափակին մէջ, ամենուրեք :

«Եւ անդ եզեւ լայխն մեծ» . 400է աւելի կիներ դանօրէն ու սպրազին կը հեծնն ու կը կսռնն և անոնց ջայլերը կը լեցընին Երլտըզի ամբողջ շրջափակը ու անկից ալ դուրս կը պոսթկանն . կարծես եզերամայրերն են ստոնք որոնք Երլտըզին անկումը և քայքայումը կերկերածայն կը շիւանեն . Սողոմ Գոմորի կործանումը չեմ կարծեր որ աւելի ա՛ռաւոր եզած ըլլայ :

Գաղանը թակարդին մէջ բռնուած է և ժամը 10ին անձնատուր կ'ըլլայ անպայման : Ու այդ վայրկեանէն Ազատութեան Բանակը անպատմելի եռանդով կը ձեռնարկէ իր փրկարար մաքրագործութեան, կալանաւորելով այդ որջին բոլոր ցեղերը և Ապտ-իւլ-Համիտ այլ ևս անոնց ճիւղմի և առանց ժանիքի իր յարկարածնին մէջ կ'առանձնացուի :

Այս էր պարտականութիւնը Ազատութեան Բանակին, Ազգային Լիգնանուր ժողովին կողմէ իրեն տրուած, և ա՛ն անտողութօրէն ի գլուխ կը հանէ զայն:

Վերջին խաղը կորսնցուցած է Կարմիր Առլթանը:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 14 ԱՊՐԻԼ 1909

Այս օրը Թուրքիոյ ժողովուրդին պատմութեան մէջ ազատագրութեան մեծ թուական մըն է: Ապա-խւլ-Համիտ Օսմանեան փառապանն զահուն վրայէն ի սպառ մարտած է:

Երեւոյ. ժողովը, Մերակոյտը և Ազատութեան Բանակին պետերը միահաղոյն որոշեցին Ապա-խւլ-Համիտի զահրնկէցութիւնը որ հաստատուեցաւ Շէյխ-խւլ-Իսլամ էֆէնտիի հետեւեալ ֆէթվայով.

Իսլամներու իմամն եղող անձը Շէրիի կարգ մը կարեւոր խնդիրները Շէրիաթի գրքերէն ջնջած, դուրս ձգած, և յիշեալ գիրքերն արգիլած և այրած է: Պէշիխւլ-Մալի մէջ շուպլութիւններ ընելով, Շէրիի թոյլատուութեանց հակառակ ծախքեր բրած է: Առանց օրինական պատճառի հպատակներ սպաննած, բանտարկած և վտարած ևւ ուրիշ կարգի հարստահարութիւններ բրած է: Առնցձէ կտքը, մինչ երդում բրած էր բարեկարգուելու զրժեց իր երդումին, Իսլամական բոլոր պարագաներն և գործերը խանգարելու հանգամանք ունեցող մ.ձ խուփութիւններ յատաջ բերելու յամտուեցաւ և կոտորած ի գործ դրաւ: Իսլամներն անոր բռնակալութիւնը փճացնել ուղեցին և շատ մը Իսլամական քաղաքներու կողմէ ծանուցուեցաւ թէ յիշեալը զահրնկէց կը նկատեն: Ըստ որում յիշեալին իշխանութեան հարունակութենէն վտար բացորոշ է, և հակառակ պարագային՝ հաւանական է

բարեկարգութիւնը, ուստի եթէ կատարուեալ և արձակուել յիսանութիւնը և գործելու խնամակալութիւնն ունեցողներուն կողմէ պատշաճ գտաուի յիշեալին առաջարկել Խալիֆայութիւնէ և Կայսրութիւնէ ներանաղ և կամ զայն գահընկէց ընել, այն ատեն ասոնց գործադրութիւնը նարկ կ'ըլլայ:

Պատասխան. — Կ'ըլլայ:

Տրուպ Գալիբս

ԷՍ ՍԷՅՏ ՍԷՀՄԵՏ ՋԻԱԷՏՏԻՆ

Ասոր վրայ, Ազգային Ընդհ. Ժողովին կողմէ երկու ճերակուտական (որոնցմէ մէկը Երամ էֆ. Երաման) և երկու երեսօտիան իբր ազգին կողմէ պատգամաւորութիւն կը գրկուին Ապա-խուլ-Համիտի, նազորդելու իր գահընկէցութիւնը:

Ժամը Յին արդէն թնդանօթիներ կը սկսին որոտալ մայրաքաղաքին ամէն կողմերը, աւետելով ՍՈՒԼԹԱՆ ՄԷՀՄԷՏ Ե. ի գահակալութիւնը. թնդանօթի խրաքանչիւր պայթիւն միլիոնաւոր ժողովուրդին կողմէ կ'ընդունուի ամէնէն խանդավառ ծափերով և քաղաքը անմիջապէս կը դրօշադարդուի:

Իսկ մայրաքաղաքի ամբողջ Մամուլը միաբերան լուտանքներ կը տեղայ Ապա-խուլ-Համիտին ետեւէն: Այս մասին կ'արժէ կարգալ Կիլիկո-Կալվաօսի երէկուան և այսօրուան թիւերը, որոնց նայնոյութիւնները չենք արտատպեր, նեղինակի իրաւունքին դէմ վարուած չըլլալու նամար:

Իսկ մեծ մարդասպանը այս զիշեր ուշ ատեն Սիրքէճիէն կառախումբով կը փոխադրուի Սեւանիկ, իրեն նեա ունենալով նինգ կին, երեք դաս:

Աստուծոյ արդարութեան կը ստ

ՀԱՅ ԳԱՅԵՏՏԻ ԳՆԳՍՍԻ



